

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ

**ՀՀ դատաիրավական համակարգի հիմնախնդիրների
արտացոլումը էլեկտրոնային լրատվամիջոցներում**

Մեդիա նյութերի վերլուծության արդյունքներ

Երևան 2014

Բովանդակություն

Հետազոտության մեթոդաբանությունը և խնդիրները	3
Արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վստահության աստիճանը	7
Դատական համակարգի անկախության հիմնախնդիրը	13
Ընտրողական արդարադատությունը և օրենքի խտրական կիրառությունը	25
Մարդու իրավունքների ոտնահարումները արդարադատության համակարգում	38
Կոռուպցիան արդարադատության համակարգում	43
Արդարադատության համակարգի գործունեության թափանցիկությունը	45
Արդարադատության համակարգի գործունեության արդյունավետությունը և որակը	51
Բարեփոխումներն արդարադատության համակարգում	59
Դատախազության գործունեության հիմնախնդիրները Էլեկտրոնային մամուլի հրապարակումներում	67
Եզրահանգումներ	84

Հետազոտության մեթոդաբանությունը և խնդիրները

Այս հետազոտության *նպատակն էր*¹ ուսումնասիրել ՀՀ դատախիզական համակարգի գործունեության վերաբերյալ հայալեզու էլեկտրոնային լրատվամիջոցների հրապարակումներում արձարժվող հիմնախնդիրներն ու դրանց մեկնաբանության առանձնահատկությունները:

Հետազոտության շրջանակներում ընդգրկվել են հայալեզու բոլոր էլեկտրոնային լրատվամիջոցները, սակայն հետազոտության խնդիրներին համապատասխանող և վերլուծության համար արժեքավոր նյութերն ընտրվել են հետևյալ կայքերից¹.

1. <http://www.a1plus.am>
2. <http://www.armnewstv.am>
3. <http://www.azatutyun.am>
4. <http://www.aysor.am>
5. <http://www.aravot.am>
6. <http://www.asekose.am>
7. <http://www.galatv.am>
8. <http://www.epress.am>
9. <http://iravaban.net>
10. <http://www.irates.am>
11. <http://www.henaran.am>
12. <http://www.hraparak.am>
13. <http://hetq.am>
14. <http://www.lragir.am>
15. <http://lurer.com>
16. <http://www.legalportal.am>

¹ Այլ կայքերում ևս եղել են թեմային առնչվող հրապարակումներ, որոնք չեն ընտրվել բավականաչափ հանգամանալից չլինելու պատճառով:

17. <http://www.medialab.am>
18. <http://www.mediamax.am>
19. <http://www.mitk.am>
20. <http://news.am>
21. <http://operativ.am>
22. <http://www.pastinfo.am>
23. <http://www.slaq.am>
24. <http://www.tert.am>
25. <http://www.yerkirmedia.am>
26. <http://www.7or.am>

Կայքերում նյութերի որոնումն իրականացվել է մի շարք բանալի բառերով.

- *դատարան*
- *դատական*
- *դատավոր*
- *արդարադատություն/արդարադատության*
- *դատախազություն*
- *դատախազ*
- *փաստաբան*
- *պաշտպան*
- *հանրային պաշտպան*
- *արդարություն/արդար*
- *անարդարություն/անարդար*

Ինչպես տեսնում ենք, ընտրված միավորները հասկացության ին բավականին լայն դաշտ են ներառում և դրանց միջոցով հնարավոր էր հայտնաբերել ՀՀ արդարադատության համակարգին առնչվող գրեթե բոլոր հրապարակումները: Վերլուծության համար առանձնացված շուրջ 170 հրապարակումները **բովանդակային** վերլուծության են ենթարկվել:

Վերլուծության համար ընտրվել են 2009թ. հունվարի 1-ից մինչև 2013թ. մայիսի 31-ը հրապարակված նյութերը: Հետազոտության քառամյա ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված էր հնարավորինս ակտուալ նյութերի ընդգրկման նպատակով:

Շատ կարևոր է ընդգծել, որ հետազոտությունը ՀՀ դատախիրավական համակարգի գործունեության վերաբերյալ ***հնարավոր բոլոր (թե՛ դրական, թե՛ բացասական) տեսակետների հավասարաչափ ներկայացման նպատակ չի ունեցել:*** Ի սկզբանե հետազոտության կիզակետում էին գտնվում ***միայն*** խնդրահարույց երևույթներն ու հիմնախնդիրները, ինչի պատճառով էլ վերլուծության մեջ գերակշռում են քննադատական տեսակետներն ու բացասական գնահատականները:

Այսպիսով, քննադատական մեկնաբանությունների և բացասական բնորոշումների գերակշռությունը ոչ թե հետազոտողների կողմնակալ մոտեցման արդյունք է, այլ՝ հետազոտության նպատակով պայմանավորված օրինաչափություն:

Ավելին, ***հետազոտությունը նպատակ չուներ չափելու որոշակի քննադատական տեսակետի տարածվածությունը, հանդիպման հաճախականությունը:*** Հետազոտական թիմը բազմաթիվ հիմնախնդիրների վերաբերյալ մեկնաբանություններ է հայտնաբերել և ամփոփել՝ դրանց ճիշտ կամ սխալ լինելու, ինչպես նաև՝ դրանց տարածվածության վերաբերյալ գնահատականները վերապահելով ընթերցողին:

Հետազոտության ակնկալվող արդյունքն էր՝ մամուլի ուշադրության կենտրոնում հայտնված հիմնախնդիրների ամփոփ շարադրանքն անգամ այն դեպքում, երբ որևէ քննադատական տեսակետ եզակի է և լայն տարածում չունի:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար գտնվել արդարադատության ոլորտում բարեփոխումների պլանավորման կամ վերանայման համար: Բնականաբար, ներկայացվող

գնահատականները բխում են որոշակի շահերից, հաճախ զգացմունքային են կամ չափազանցված: Սակայն, անկախ դրանց՝ իրականությունը համապատասխանության աստիճանից, բերված տեսակետները հարկավոր է հաշվի առնել բարեփոխումներ պլանավորելիս և իրականացնելիս:

Ակնհայտ է, որ անգամ իրականությունը չարտացոլող, խիստ ծայրահեղացված գնահատականներն իրենց հերթին հետևանք են դատախիրավական համակարգի նկատմամբ հասարակական ընդհանուր անվստահության կամ այս համակարգի ոչ թափանցիկ գործելակերպի: Ուստի ցանկացած քննադատական տեսակետ անկախ իր հիմնավորվածությունից կամ տարածվածությունից, ենթակա է ուշադրության և այն ծնող պատճառների վերլուծության:

Արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վստահության աստիճանը

Արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վստահությունը պայմանավորող գործոնները բազմաթիվ են: Դրանք համակարգի գործառության կոնկրետ հետևանքներն ու արդյունքներն են, այլ ենթահամակարգերի (օրինակ քաղաքական) ազդեցության հասարակական ընկալումը, արդարության, անկողմնակալության և այլ արժեքների իրացման վերաբերյալ ընկալումները, և այլն:

Ընդ որում, անգամ հաջողված բարեփոխումների պարագայում չկան հասարակական վստահության բարձրացման երաշխիքներ: Հանրային հնչեղություն ունեցող, աղմկահարույց իրադարձությունները կարող են իրենց բացասական ազդեցությամբ չեզոքացնել ոլորտում տեղ գտած դրական տեղաշարժերի դրական ընկալումը: Այս է պատճառը, որ Հայաստանում վերջին տարիներին տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումները օրինաչափորեն չեն հանգեցնում հասարակական վստահության համարժեք բարձրացման: Օրինակ, արդարադատության բնագավառում իրականացվող բազմաթիվ բարեփոխումներն այս համակարգի նկատմամբ հասարակական վստահության էական փոփոխություն առաջ չեն բերել, քանի որ մինչ այժմ հասարակությունը կասկածներ ունի քաղաքականացված քրեական գործերի առկայության մասին: Նմանատիպ անգամ մեկ գործի առկայությունը կամ ոստիկանության կողմից բռնության չհիմնավորված կիրառությունը բավական է վստահության աստիճանի էական նվազեցման համար:

Ստորև նկարագրված են այն հիմնական խնդիրները, որոնք մամուլի հրապարակումներում ներկայացվել են որպես համակարգի նկատմամբ հասարակական վստահությունը պայմանավորող գործոնները:

Դատարանների պրակտիկ գործունեությունը՝ դատական համակարգի նկատմամբ անվստահության ձևավորման գործոն: Դատական համակարգի նկատմամբ հասարակական վստահության ցածր մակարդակի վրա էական ազդեցություն ունի դատարանների առօրյա, ամենօրյա գործունեությունը: Ոչ միայն այս կամ այն աղմկահարույց դատական դեպքն է ձևավորում հանրային կարծիք, այլև քաղաքացիների՝ դատարանների հետ անմիջական առնչությունը:

Առնչությունը դատարանների հետ քաղաքացուն բերում է այն համոզման, որ դատարանները պատժիչ մարմիններ են և նրանց միակ նպատակն է քաղաքացուն հասարակությունից ամեն գնով մեկուսացնելը՝ թեկուզ աննշան արարքների համար:

Կասկածը՝ դատարանների կողմնակալության և անպատժելիության մթնոլորտի վերաբերյալ: Արդարադատության նկատմամբ առկա անվստահության մթնոլորտը պայմանավորված է նաև արդարադատության կողմնակալ կիրառման վերաբերյալ կասկածով: Լայնորեն տարածված է այն տեսակետը, որ արդարադատությունն իրականացվում է դատարանի ակնհայտ կողմնապահության պայմաններում, ինչը պայմանավորված է կամ պետական իշխանությունից դատավորի կախվածությամբ կամ դատավորի՝ կոռումպացված լինելու հանգամանքով:

Լրատվամիջոցներում հաճախակի են դատական այնպիսի գործերի հիշատակումները, որոնցում դատապարտվում են այնպիսի անձինք, որոնց կատարած արարքների հասարակական վտանգավորությունը անհամեմատելի է այլոց կատարած գործողությունների հասարակական վտանգավորության հետ: Պատճառը անպատժելիության մթնոլորտն է, որն արտացոլվում է հետևյալ կարծիքով. «այսպես կոչված «հաբրգաձների» ռեժիմի հենասյունների որդիներին ու բարեկամներին, եթե նույնիսկ մարդ սպանեն կամ վրաերթի ենթարկեն, անգամ եթե ակնհայտ հանցագործություններ կատարեն, միննույն է՝ նրանց դիպչող չի լինի, որովհետև այս երկիրը բռնապետական է»:

Դատարանների գործունեության թափանցիկության և հրապարակայնության բացակայությունը: Դատարանները ներկայանում են որպես փակ համակարգեր, որտեղ չկա թափանցիկություն և հրապարակայնություն: ՀՀ դատարանները ՀՀ քաղաքացու համար ներկայանում են որպես մեկուսացված միջավայր, որտեղ ամեն ինչ արվում է ստվերային պայմանավորվածությունների շրջանակներում: Եթե հեռուստատեսությամբ պետական իշխանության այլ թևերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն տրվում է հասարակությանը, ապա դատական նիստերի, հատկապես նախաքննական մարմինների ապօրինությունների մասին տեղեկատվությունը հասարակությունը ստանում է հիմնականում շշուկների տեսքով, որն ավելի է խորացնում առանց այն էլ առկա թերահավատ վերաբերմունքը արդարադատության նկատմամբ:

Անգամ դատական համակարգի՝ ոչ թափանցիկ և ոչ հրապարակային գործելակերպի մասին ՀՀ նախագահի խոսքը ընկալվել է որպես քարոզչական քայլ, որը որոշ ժամանակ անց մոռացության է մատնվել:

Վճռաբեկ դատարանի գործունեությունը՝ դատական համակարգի նկատմամբ անվստահության հիմք: Հասարակության և հատկապես փաստաբանների մոտ դատական համակարգի նկատմամբ անվստահության ստեղծման համար բավարար հիմք է Վճռաբեկ դատարանի գործունեությունը: Ինչպես նշել է փաստաբան Արա Ջոհրաբյանը, արդարադատության նկատմամբ վստահության անկմանն է նպաստում «Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները վերադարձնելու կամ վարույթ ընդունելու շուրջ ստեղծված իրավիճակը, որոշակիության իսպառ բացակայությունը»: Ընդ որում, այս տեսակետը լայնորեն տարածված է:

Ինտերնետային լրատվամիջոցներում առանցքային է համարվում այն հարցերի քննարկումը, թե ինչու Վճռաբեկ դատարանը բողոքները վերադարձնելու իր որոշումները չի

պատճառաբանում և ընդհանրապես շատ փակ է աշխատում: Օրինակ, Սահմանադրական դատարանի գործունեության մասին ՀՀ քաղաքացիներն ավելի շատ տեղեկատվություն ունեն, քան Վճռաբեկ դատարանի, իսկ փաստաբաններն իրենց հարցազրույցներում կարմիր թելի պես այն միտքն են զարգացնում, որ Սահմանադրական դատարանի գործելակերպի թափանցիկության հետ անհամեմատելի է Վճռաբեկ դատարանի գործունեությունը:

Որպես Վճռաբեկ դատարանի նկատմամբ հասարակության անվստահության ակնհայտ դրսևորում էլեկտրոնային լրատվամիջոցները մատնանշել են այն փաստը, որ «Human Rights Watch»-ը նույնիսկ ՀԱԿ ակտիվիստների հարցով նամակ էր ուղարկել Վճռաբեկ դատարանի նախագահին, որտեղ մտահոգություն էր հայտնվում 4 ամբաստանյալների նկատմամբ կիրառված դաժան վերաբերմունքի և վկայությունների առնչությամբ արդյունավետ հետաքննության բացակայության կապակցությամբ: Նամակում ընդհանուր առմամբ թերահավատ վերաբերմունք կար ՀՀ-ում իրականացվող արդարադատության նկատմամբ:

Կոռուպցիա: Հասարակության մոտ առավել արմատացած է այն մտայնությունը, որ ՀՀ դատարանները և ընդհանրապես արդարադատություն իրականացնող մարմինները թաթախված են կոռուպցիայի մեջ: Ընդ որում, այդ պատկերացումը բավական ընդանրական բնույթ է կրում, իսկ կոռուպցիան հիմնականում նույնացվում է կաշառակերության հետ: Դատարանների կոռումպացվածությունն հասկացությունը հասարակության լայն զանգվածների մոտ նույնացվում է դատավորին կաշառք տալու հետ՝ կոնկրետ գործը կաշառատուի համար բարենպաստ լուծելու համար:

Անվստահությունը բարեփոխումների նկատմամբ: Հասարակական վերաբերմունքի վրա իր էական ազդեցությունն է ունենում ընթացիկ կամ ապագայում նախատեսվելիք բարեփոխումների նկատմամբ հասարակության թերահավատ

վերաբերմունքը: Լրատվամիջոցներում տարածված է բարեփոխումների ընթացքի բացասական գնահատականը, հատկապես երբ խոսքը վերաբերում է 2009-2011թթ. իրականացված դատաիրավական բարեփոխումներին: Համար-վում է, որ իրականացված բարեփոխումները նշանակալի արդյունքներ չեն տվել, իսկ մյուսները մնացել են թղթի վրա, և դատարանները այդպես էլ չեն անկախացել: Որպես բարեփոխումների քիչ թե շատ տեսանելի արդյունքներ, նշվել են օրենսդրության ու դատարանների շենքային պայմանների բարելավումը:

Դատարանի նկատմամբ անվստահությունը՝ պայմանավորված քաղաքական դրդապատճառներով:
Հասարակության մի մասի՝ դատարանի վերաբերյալ պատկերացումների համակարգը պայմանավորված է նրանց քաղաքական կողմնորոշումներով:

Ինչպես նշել է լրագրող Գայանե Առուստամյանը «Galatv.am»-ի հետ զրույցում, «Հայաստանում վախի մթնոլորտն այնքան է կարծրացել ու վերածվել մարդկանց շրջանում արդարադատության նկատմամբ վստահության իսպառ անկման, որ մարդիկ ուղղակի գերադասում են գործ չունենալ իրավապահ մարմինների հետ, որովհետև իրավապահ մարմինն այն մարմինն է, որը բռնապետության պայմաններում ծառայում է որպես խարազանող մարմին, որպես պատժիչ մարմին»:

Լրատվամիջոցների, մասնավորապես «Gala TV»-ի կողմից պատրաստված հաղորդումները, որոնք վերաբերում են ՀՀ դատական համակարգի նկատմամբ հասարակության տարբեր խմբերի ունեցած վստահությանը, թեև հիմնականում անդրադառնում են քաղաքական ակցիաների մասնակիցների կարծիքներին, սակայն արտացոլում են նաև մասնագետների հնչեցրած գնահատականները, որոնք վկայում են, որ հասարակության ակտիվ մասը ՀՀ դատարանների նկատմամբ ընդհանուր առմամբ թերահավատ վերաբերմունք ունի:

Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականը:
Մարդու իրավունքների պաշտպանն իր 50-օրյա պաշտոնավարման կապակցությամբ հանդես էր եկել հայտարարությամբ, որտեղ արդարադատության համակարգին անդրադարձը կատարվում էր հենց հասարակության կողմից արդարադատության համակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքի լույսի ներքո:

Պաշտպանը եզրակացրել էր, որ առանձին դատավորների անարդարության, դատական իշխանության բարձրագույն ղեկավարության ակնհայտ թերացումների և դատական համակարգի անկատարության պայմաններում մարդիկ կորցնում են արդարության զգացումն ու, որպես դրա հետևանք, ծայրահեղ հիասթափվում պետական բոլոր ինստիտուտներից:

Եվրոպական դատարանի որոշումները: ՀՀ դատական համակարգի նկատմամբ հասարակական վերաբերմունքի ցայտուն դրսևորումն է նաև Հայաստանից Եվրոպական դատարան ներկայացված հայտերի թվաքանակի շարունակական աճը: «Այն, որ ՀՀ դեմ կայացված Եվրոպական դատարանի 40 վճիռներից 38-ում առկա է իրավունքի խախտում, ստվեր է նետում ՀՀ դատական համակարգի հեղինակության վրա», - նշում են իրավապաշտպանները: Ըստ Տիգրան Հայրապետյանի, ՀՀ արդարադատության համակարգը հիմա հեղինակազրկված է և, անգամ համակարգի բարեփոխման ու ապաքինման պարագայում երկար տարիներ են հարկավոր՝ Եվրոպական մակարդակով հեղինակության վերականգնման համար:

Նկատելի է նաև այն միտումը, որ բազմաթիվ փաստաբաններ և քաղաքացիներ, ի սկզբանե որևէ հույս չունենալով ներպետական դատական մարմինների նկատմամբ, հրապարակային և բաց խոստովանում են, որ իրենք պարզապես փորձում են սպառել ներպետական մարմիններ դիմելու հնարավորությունները, որպեսզի կարողանան դիմել Եվրոպական դատարան:

Լրատվամիջոցներում տեսակետներ են հնչում, հիմնականում իրավապաշտպանների կողմից, որ արդարության և ի մասնավորի արդարադատության համակարգի նկատմամբ առաջացած անվստահության մթնոլորտի պատճառով են մարդիկ լքում երկիրը (օրինակ՝ իրավապաշտպան Վարդան Հարությունյանի կարծիքով մարդիկ արդարադատության պակասի պատճառով են լքում երկիրը):

Դատական համակարգի անկախության հիմնախնդիրը

ՀՀ դատարաններին առնչվող գլխավոր հարցը, որը գտնվում է հասարակության և միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում, վերաբերում է ՀՀ դատարանների անկախությանը, նրանց ինքնուրույն գործունեությանը: Մնացած բոլոր հարցերն այս կամ այն կերպ առնչվում են այն հիմնարար հարցին, թե դատարանները որքանով են անկախ, կարող են արդյոք առանց ճնշումների կայացնել արդար դատավճիռներ: Քաղաքացիները դատարանների անկախության բացակայության մասին խոսելիս ի սկզբանե նկատի են ունենում պետության կողմից ճնշումներն առանձին դատավորների վրա, դատարանների՝ պետության պատվերը կատարելը:

Էլեկտրոնային լրատվամիջոցներում հրապարակված նյութերից կարելի է եզրակացնել, որ հասարակության մոտ չկան միասնական պատկերացումներ այն մասին, թե պետության կողմից դատարանի նկատմամբ ճնշումները կոնկրետ ինչ դրսևորումներ են ունենում և որ պետական մարմիններն են դատարանների նկատմամբ ճնշումներ բանեցնում: Նույնիսկ փորձագետների մոտ այս հարցի վերաբերյալ չկան հստակ պատկերացումներ, քանի որ շատ դեպքերում չեն մատնանշվում այն մեխանիզմները, որոնց գործադրմամբ ՀՀ դատարանները ճնշումների են ենթարկվում:

Դատարանի անկախության բացակայության վերաբերյալ երկու տեսակետներ կան: Առաջին՝ ՀՀ դատարանները փորձում են

անկախ լինել, սակայն պետական իշխանությունը դա թույլ չի տալիս տարբեր մեթոդներով: Եվ երկրորդ՝ դատարանը դիտարկվում է որպես պետական իշխանության մաս, որի բոլոր գործողությունները պայմանավորված են օրվա իշխանության կամքով: Այս դեպքում դատարանների անկախության մասին ընդհանրապես խոսք չի գնում. դատարանները բնութագրվում են որպես դատախազության կցորդ, որպես իշխանությունների կամակատար, և այլն:

Ստորև ներկայացված են և՛ դատական համակարգի անկախության բացակայության հիմնական դրսևորումները, և՛ դրանց պատճառները՝ ըստ լրատվամիջոցների մեկնաբանությունների:

Քաղաքականացված² գործերի քննության արդյունքները՝ դատարանների անկախության բացակայության վկայություն: Իրավապաշտպան Վարդան Հարությունյանը նշել է, որ ՀՀ-ում դատարանները երբեք անկախ չեն եղել, իսկ հատկապես վերջին 5 տարիների ընթացքում՝ մարտի 1-ից հետո, ՀՀ դատարանները բացարձակ կախման մեջ են գտնվում երկրի հզորների կամքից: Ըստ նրա՝ քաղաքական գործերում քաղաքական դեմքերից են կախված դատարանները, իսկ այլ գործերով՝ առանձին իշխանավորների կամքից:

Փաստաբան Լուսինե Սահակյանը դատարանների անկախության բացակայությունը կապում է քաղաքական կամքի բացակայության հետ: Ըստ Լուսինե Սահակյանի՝ պետք է լինի քաղաքական կամք պետական իշխանության մոտ, որպեսզի թույլ տան, որ դատարաններն արդարադատություն իրականացնեն և լինեն անկախ: Լուսինե Սահակյանը նշել է, որ կան դատավորներ, ովքեր փորձում են, այնուամենայնիվ, արդար դատական ակտ կայացնել:

² Սրանք, ըստ հասարակական ընկալման, քաղաքական դրդապատճառներով իրականացվող հետապնդումներն են՝ հիմնականում քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ:

Ինչպես տեղեկացնում է Iragir.am-ը ՀԱԿ ակտիվիստների գործով Վերաքննիչ դատարանի նիստերից մեկում փաստաբան Մուշեղ Շուշանյանը ընթերցելով վերաքննիչ բողոքը դատարանի ուշադրությունը հրավիրել է ՔՕ 316 հոդվածի վրա, որը վերջին 4 տարիների ընթացքում կիրառվել է երեսուն անգամ ավել, քան Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր՝ այս Հանրապետության գոյության մնացած բոլոր 17 տարիների ընթացքում: Ընդ որում, այն կիրառվել է ճնշող մեծամասնությամբ միայն քաղաքական հակառակորդների կամ նրանց պաշտպանող անձանց նկատմամբ, ինչը ծայրահեղ մտահոգիչ իրողություն է:³

Ըստ փաստաբան Վահե Գրիգորյանի՝ «Ո՞նց կարող է ՀՀ վրա սովեր չզցել Երևանի կենտրոնում իրականացված իրացման գործընթացը, երբ մի ողջ կառավարություն, Ազգային ժողովի և դատական իշխանության հետ համատեղ, մարդկանց ունեզրկել է քաղաքի կենտրոնում Սահմանադրության ուղիղ խախտումներով: Կամ ո՞նց կարող է սովեր չզցել մարտի 1-ից հետո 100-ից ավելի մարդկանց ձերբակալությունները ընդամենը իրենց համոզմունքների համար»:

Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների նկատմամբ գործադրվող ճնշումը: Ըստ փաստաբան Հայկ Ալումյանի, դատական համակարգի անկախությանը չի նպաստում հայաստանյան դատական համակարգի բրզաձև կառուցվածքն՝ իր ենթակայական կոշտ լծակներով: Ըստ նրա՝ «Խոսքը վերաբերում է ն՝ Վճռաբեկ դատարանի, ն՝ Կարգապահական հանձնաժողովի, ն՝ գործադիր իշխանության՝ դատավորներին պատասխանատվության ենթարկելու բավական լայն լիազորություններին»:

Տարածված է այն պատկերացումը, որ ՀՀ դատարաններն անմիջական վերահսկողության են ենթարկվում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից: ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Սպարտակ Մելիքյանը ԱԺ նիստի ժամանակ հայտարարել էր, որ Վճռաբեկ

³ «ՔՕ 316 հոդվածը՝ քաղաքական հաշվեհարդարի գործիք», Տաթև Վարդապետյան, 06.09.2013, - <http://www.Iragir.am/index/arm/0/right/view/86496>:

դատարանի նախագահ Արման Մկրտումյանը և նույն դատարանի քրեական գործերով պալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը իրենց ձեռքում են կենտրոնացրել ՀՀ դատական համակարգի կոռուպցիոն լծակները, նրանց անձնական շահադիտությամբ և կոնկրետ հրահանգով են կայացվում գրեթե բոլոր դատական որոշումներն ու վճիռները, որ նաև այդպիսով շարքային դատավորների մեծամասնությունն այսօր գրկված է որևէ ինքնուրույն, արդար վճիռ կայացնելու հնարավորությունից, իսկ չենթարկվողները պարզապես հեռացվում են աշխատանքից:

Այս հայտարարությունը բավականին լայն արձագանքներ էր առաջացրել: Շատ դեպքերում լրատվամիջոցները Վճռաբեկ դատարանի նկատմամբ հնչեցվող քննադատությունը դիտարկում են որպես իշխանության շահերին սպասարկող, քանի որ վերջինս հնարավորություն է ստանում սահմանափակել Վճռաբեկ դատարանի՝ դատական ստորադաս մարմինների վրա ազդելու չափազանց մեծ հավակնությունները:

Փաստաբան Կարեն Թումանյանը նշում է, որ Վճռաբեկ դատարանը պատասխանատվություն է կրում երկրում արդարադատության իրականացման համար, իսկ Վճռաբեկ դատարանի ղեկավար Արման Մկրտումյանը, նրա խոսքով, այսօր ի վիճակի չէ անկախ պահելու դատական համակարգը: Փաստաբանը նշում է, որ ստորադաս դատարանները կաշկանդվածություն ունեն Վճռաբեկ դատարանի դիրքորոշումից, և վերջինիս «ոչ ճիշտ իրավական աշխատանքային վիճակն» անդրադառնում է նաև ստորադաս ատյանների աշխատանքի վրա:

Ըստ փաստաբանի, ամբողջ դատական համակարգի կախվածությունը մեկնաբանվում է 2 իմաստով՝ ներքին և արտաքին: Ներքին կախվածությունը դատավորի կախվածությունն է վերադաս ատյանի դատավորից, արտաքինը՝ կառավարությունից, ի դեմս դատախազության: Չնայած այդ կախվածությունն էլ, ըստ նրա, միանշանակ չէ. կան դատավորներ,

ովքեր անձնական փորձով ցույց են տալիս, որ հնարավոր է կախում չունենալ ուզում են և կարողանում են անկախ լինել:

Վճռաբեկ դատարանի գործելակերպով է պայմանավորվում ստորադաս դատարանների ասորյա գործունեությունն ու դրանցում տիրող ամենաթողության մթնոլորտը: Այսպես, տեսակետ է հնչել, որ «Հայաստանում որևէ դատավոր իրեն թույլ է տալիս հակաիրավական որոշում կամ վճիռ կայացնել, քանի որ միշտ չէ, որ Վճռաբեկ դատարանը այդ ակնհայտ ապօրինի վճիռը կրեկանի, իսկ Արդարադատության խորհուրդը դրա համար դատավորին կենթարկի պատասխանատվության»: Ըստ այդ տեսակետի՝ «Դատավորը կարող է անկախ լինել բոլորից և ամենից, բայց ոչ երբեք այդ երկու մարմինների «հզոր» անդամներից: Դատավորը կարող է արհամարհել օրենքը, Սահմանադրական դատարանի որոշումը, միջազգային իրավունքի նորմը, բայց ոչ երբեք Վճռաբեկի «զոնալ» դատավորի շատ հաճախ հակաիրավական ներքին ցուցումը»:

Այսպիսով, կախվածությունը Վճռաբեկ դատարանից հանգեցնում է դատավորների ինքնագրաքննությանը, որոնք մտածում են ոչ թե այնպես գործել, ինչպես օրենքով է նախատեսված, այլ այնպես, որ Վճռաբեկ դատարանի մոտ իրենց վարքագիծը անվստահություն չառաջացնի:

Դատարանների անկախության ճնշման առանձին դեպքերը:

Էլեկտրոնային լրատվամիջոցներում մշտապես տեղեկություններ են հրապարակվում, որոնք վերաբերում են դատարանների ինքնուրույնության սահմանափակմանը: Ամենաբնորոշներից է դատավոր Սամվել Մնացականյանի դեպքը:

Վճռաբեկ դատարանի մուտքի մոտ 2011թ. հուլիսի 7-ին բողոքի ակցիա էին անցկացնում շուրջ 200 փաստաբաններ՝ փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանի գլխավորությամբ: Նրանք իրենց ձեռքներին պարզել էին պաստառներ՝ «ոչ արդարադատության դահիճներին», «առանց

«դաբրոների» արդարադատություն», «մեր պահանջը իրական արդարադատությունն» է:

Փաստաբաններն իրենց բողոքի գործողության ժամանակ տվեցին հարցազրույցներ, որոնք վկայում են բողոքի բուն գործողության դրդապատճառների մասին: Այսպես, ըստ փաստաբան Ռուբեն Ռշտունու՝ «Արդարադատությունը հոգևարք է ապրում, անդունդի եզրին է, գլորվում է անդունդը, այսօր մեր արդարադատությունը լրիվ մահացած է, դատաբանները եղել ու մնացել են դատախազության կցորդը»: Նա նաև նշում էր, որ այսօրվանից հրապարակային պայքարի սկիզբը դրված է:

Փաստաբաններն իրենց փաստարկված դժգոհությունը հայտնեցին նաև Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մամվել Մնացականյանի խափանման միջոց կալանքը գրավով կիրառելու որոշման դեմ Վճռաբեկ դատարանի ընդվզման կապակցությամբ, որը դատավորի ինքնուրույնության սահմանափակման ցայտուն դրսևորումներից էր:

ՀՀ արդարադատության խորհուրդը դիմել էր ՀՀ նախագահին, որպեսզի դատավորի լիազորությունները դադարեցվեն, քանի որ վերջինս չէր պատճառաբանել գրավով մեղադրյալի խափանման միջոց կալանավորումը փոփոխելու որոշումը:

Փաստաբանների պալատի նախագահ Ռուբեն Մահակյանը, ով ուսումնասիրել էր այս գործը, ասում է. «Ուրեմն տեսեք, այն որոշումը չպատճառաբանելու համար նա չի պատժվում, իսկ խափանման միջոց գրավ կիրառելը դատապարտվում է Վճռաբեկ դատարանի նախագահի, Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովի և մյուս անդամների կողմից»:

Փաստաբանը գտնում է, որ չպատճառաբանված որոշումներ Հայաստանում ամեն օր կայացվում են տասնյակներով և հորդորում էր փաստաբաններին բոլոր այդ որոշումները բերել

Փաստաբանների պալատ, այնուհետև ներկայացնել Արդարադատության խորհրդին, որպեսզի ապօրինի որոշումներ կայացրած դատավորների նկատմամբ նույնպես կարգապահական վարույթներ հարուցվեն:

Մեկ այլ փաստաբան՝ Լուսինե Սահակյանը, նշում է, որ «...փաստորեն այսօր դատավորը պատժվում է միայն նրա համար, որ ինքը չի ենթարկվել Վճռաբեկ դատարանի կամփին: Մենք որևէ խնդիր չունենք պաշտպանելու Մնացականյանին, նպատակը նա է, որ մենք պաշտպանենք այն դատավորին, որը ղեկավարվել է օրենքով»:

Լրատվամիջոցներում հրապարակված այս տեսակետները ցույց են տալիս, թե որքան չպաշտպանված է դատավորը, որ անգամ փաստաբանական հանրույթն է վերցրել դատավորին իշխանությունների կամայականություններից պաշտպանելու դրոշը:

Փաստաբանները տարածել էին հայտարարություն, որտեղ նշվում էր, որ իրենք խստորեն դատապարտում են Արդարադատության խորհրդի նման գործելակերպը, որն, ըստ էության, արդեն իրականացնում է ինկվիզիտորի գործառույթներ: Հիմնավորվում էր դատավորի նկատմամբ կիրառվող պատժի անհիմն լինելը և տարակուսանք էր հայտնվում այն ուշագրավ փաստի համար, որ քրեական հետապնդման մարմինը՝ քննիչն ու դատախազը, չեն առարկել գրավի կիրառման դեմ, մինչդեռ Վճռաբեկ դատարանի նախագահը որոշումը կայացնելուց երկու օր անց, դրսևորելով ակնհայտ շտապողականություն, գրությամբ դիմել է Արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովին՝ կարգապահական վարույթ հարուցելու խնդրանքով, այն դեպքում, երբ բազմաթիվ անգամներ դատարանները մերժել են գրավի կիրառումը՝ ընդհանրապես որևէ կերպ չպատճառաբանելով նման որոշումները, իսկ Վճռաբեկ դատարանի նախագահը կամ Արդարադատության խորհուրդը երբևէ չեն անդրադարձել նման որոշումներ կայացրած

դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրին:

Հայտարարության մեջ նշվում էր, որ Արդարադատության խորհրդի կողմից կայացված վերոհիշյալ որոշումն, ըստ էության, ոտնձգություն է դատական իշխանության և դատավորների անկախության նկատմամբ, միաժամանակ հանդիսանալով զսպող միջոց (chilling effect)՝ արդարացնելով հիմնականում խափանման միջոցներից ամենածանրը՝ կալանավորումը, կիրառելու արատավոր պրակտիկան և գրեթե իսպառ վերացնելով հետագայում դատավորների կողմից գրավի կիրառման հնարավորությունը:

Վերջում եզրակացություն էր արվում այն մասին, որ ոչ թե դատավոր Ս. Մնացականյանի կայացրած որոշումը, այլ Կարգապահական հանձնաժողովի ու Արդարադատության խորհրդի և Վճռաբեկ դատարանի նախագահ Ա. Մկրտումյանի գործելակերպն են նսեմացնում դատական իշխանության հեղինակությունը և զորակցություն էր հայտնվում քաղաքացիական արիություն դրսևորող սակավաթիվ դատավորներին՝ կոչ անելով հանրապետության նախագահին մերժել դատավոր Սամվել Մնացականյանի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի միջնորդությունը: Միաժամանակ նշվում էր, որ պետք է վերանայվի ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի, Արդարադատության խորհրդի վերոհիշյալ որոշումն ընդունած անդամների, Կարգապահական հանձնաժողովի անդամների հետագա պաշտոնավարության նպատակահարմարությունը: Այս հայտարարության տակ ստորագրել էին 16 փաստաբան:

Ղատարանների կախվածությունը դատախազությունից: ՀՀ ղատարանների ինքնուրույնության բացակայությամբ մտահոգ փորձագետները հիմնականում ուշադրություն են դարձնում այն հանգամանքի վրա, որ ՀՀ ղատարանները կախված են դատախազության համակարգից: Ըստ փաստաբան Հայկ

Ալումյանի՝ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր դատարաններն աշխատում են դատական ակտերը կայացնել դատախազության օգտին: Այդ դեպքում, անգամ սխալվելու պարագայում, ըստ փաստաբանի, իրենք խնդիր չեն ունենա: Մինչդեռ ամբաստանյալի օգտին սխալվելու դեպքում, Ալումյանի համոզմամբ, դատավորը կարող է զրկվել ամեն ինչից, ինչպես պատահեց գրավի դիմաց անձին ազատ արձակած դատավոր Մամվել Մնացականյանի դեպքում՝ նրան ազատեցին պաշտոնից: Մակայն եթե դատավորը կալանավորումն ընտրելու որոշման մեջ գրում է, որ մեղադրյալը կատարել է, այլ ոչ թե մեղադրվում է այսինչ հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու մեջ, ոչ ոքի մտքով չի անցնում դատավորին պատժել:

Փորձագետները դատախազությունից դատարանների կախվածությունը հասկանում են այն համատեքստում, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները չեն կարողանում մերժել դատախազության միջնորդությունները և փաստորեն կատարում են վերջինիս կամքը:

Ըստ «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» նախաձեռնության տնօրենների խորհրդի նախագահ Հրայր Ղուկասյանի՝ «Այսօր դատական համակարգում ներքին անկախության խնդիր կա դատախազությունից: Վերջին տարիների փորձը՝ կալանավորումների մեծ քանակը և արդարացման դատավճիռների սակավությունն ապացուցում է, որ դատախազությունը դոմինանտ դեր ունի քրեական արդարադատության համակարգում: Դատախազների ներկայացրած կալանման միջնորդությունների մեծամասնությունը բավարարվում է դատարանների կողմից, մինչդեռ նրանք ձեռնպահ են մնում արդարացման դատավճիռներ կայացնելիս, քանի որ այդպես հավանաբար ավելի հանգիստ է դատավորների համար»:

Ավելի կարճ և համառոտ է արտահայտվել փաստաբան Նինա Կարապետյանցը, ում կարծիքով Հայաստանում եռաստիճան

դատական համակարգը չի գործում, դատավորի որոշումն էլ կախված է դատախազի համոզմունքից:

Դատավորների բարձրաստիճան հովանավորները:
Լրատվամիջոցները նշում են մի շարք դատավորների առաջխաղացման օրինակներ, որոնք ամեննին էլ պայմանավորված չեն եղել նրանց մասնագիտական պատրաստվածությամբ: Տեսակետ է հնչել, որ դատավորների մեծամասնությունն իրենց «տանիքն» ունեն պետական իշխանության բարձր օղակներում և կատարում են նրանց կամքը: Ըստ իրավապաշտպան Ռուբեն Մարտիրոսյանի՝ ՀՀ-ում աշխատող դատավորների կեսից ավելին հովանավորվում է բարձրագույն իշխանավորների կողմից և կատարում է միայն վերջիններիս ցուցումները:

Լրատվամիջոցները ուշադրություն են հրավիրում այն հանգամանքի վրա, որ շատ հաճախ դատավորների մոտ նկատվում է ներքին մեծ կաշկանդվածություն ազատ գործելու անգամ այն պարագայում, երբ որևէ ճնշում բացակայում է կոնկրետ գործով: Վերլուծաբանները դա պայմանավորում են դատավորի վրա բազմազան գործոնների ազդեցությամբ, երբ անգամ սովորական ազատ պայմաններում դատավորը վախենում է կատարել օրենքի պահանջներից բխող գործողությունները:

Այլ գնահատականներ: «Transparency International» միջազգային հակակառուպցիոն կազմակերպության զեկույցում նշվում է, որ Հայաստանի դատական համակարգի հիմնական խնդիրը շարունակում է մնալ անկախության և թափանցիկության անբավարարությունը:

Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանն իր պաշտոնավարման 50-օրյա շրջանի առիթով անդրադարձել է արդար դատաքննության իրավունքին, որի մեջ կարևոր արձանագրում էր արվում այն մասին, որ իր խորին համոզմամբ դատավորն անկախ չէ որպես անհատ, քանի որ կարող է ճնշման

ենթարկվել դատական իշխանության բարձրագույն ղեկավարության կողմից:

Դատարանի անկախության բացակայության հետևանքները:

Դատարանի անկախության բացակայության հետևանքով, ըստ Արթուր Մաքունցի, դատական համակարգը չի հանդիսանում այն ինստիտուտը, որով պետք է վերականգնվի մարդու խախտված իրավունքը ՀՀ-ում:

Այն իր բացասական ազդեցությունն է ունենում արդարադատության համակարգի մյուս կարևոր տարրերի վրա: Լրատվամիջոցներում արձանագրվում է, որ Հայաստանում փաստաբանական ինստիտուտն ավանդաբար ուժեղ է, սակայն դատարանի կախվածության պայմաններում այն կորցնում է հավասարակշռողի դերը, և արդարադատությունը, որպես այդպիսին, իմաստազրկվում է:

Արդարադատության բացակայությունը խարխլում է պետության հիմքերը, քանի որ արդարադատությունը համարվում է ժողովրդավարության ու իրավահավասարության առանցքը: Քաղաքացին անտարբերությամբ և թերահավատությամբ է լցվում ընդհանրապես պետության և արդարության նկատմամբ, որն էլ հանգեցնում է երկրից նրա հեռանալուն:

Մյուս կարևոր հետևանքն այն է, որ միջազգային ասպարեզում սասանվում է ՀՀ հեղինակությունը: Միջազգային կառույցները մեծ ուշադրություն են դարձնում այն հանգամանքին, թե դատական իշխանությունը որքանով է անկախ. այն համարվում է ժողովրդավարության չափման կարևոր ցուցիչներից մեկը:

Բարեփոխումների տապալումը:

Լրատվամիջոցներում 2եշտադրվում է այն գաղափարը, որ դատաիրավական բարեփոխումները որևէ օգուտ չտվեցին, և դատարանների անկախության հարցն այդպես էլ լուծում չստացավ: Առկա է տեսակետ, որ այդ բարեփոխումների արդյունքում ՀՀ դատարաններն ավելի շատ կախվածությունն ձեռք բերեցին պետական իշխանությունից, քանի որ մի շարք բարեփոխումներով

պետական իշխանությունները դատարանների վրա ազդելու նոր լծակներ ստացան: Բարեփոխումների ժամանակ կար այն տեսակետը, որ եթե դատավորների աշխատավարձը բարձրացվի, ապա նրանք կաշառք չեն վերցնի, ավելի ազատ կլինեն: Սակայն առկա է նաև հակառակ պատկերացումը: Համաձայն դրա, դատավորների և դատախազների աշխատավարձն ինչքան բարձրանում է, այնքան նրանք իրենց ավելի պարտավորված են զգում իշխանության առջև:

Ծրագրային բարեփոխումների նկատմամբ առավել թերահավատ վերաբերմունք են դրսևորում փաստաբանները, որոնք ընթացող դատախրավական բարեփոխումների մեջ դատարանների ինքնուրույնության բարձրացման որևէ միտում չեն տեսնում: Հայտնի փաստաբաններից մեկն ընդգծել է, որ այսօր դատական համակարգն անկախացնելու կարգախոսի ներքո հասկացությունները նենգափոխելով՝ «դատավորներին գցել ենք էլ ավելի ստրկացուցիչ պայմանների մեջ»:

Բարեփոխումների առաջարկություններ: Լրատվամիջոցներում հանդես եկող փորձագետները մատնանշել են, թե ինչպիսի բարեփոխումները կարող են հանգեցնել դատական իշխանության անկախության ձեռքբերմանը: Օրինակ՝ հնչել է այն կարծիքը, որ տարաբնույթ գործոններից և գործադիր մարմնի ազդեցություններից դատական համակարգը դուրս բերելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենսդրության մեջ դա արձանագրել, այլև հստակ մեխանիզմներ սահմանել դրանք իրագործելու համար:

Ըստ իրավապաշտպան Վարդան Հարությունյանի՝ դատական համակարգը կայացած կլինի միայն այն ժամանակ, երբ անկախանա գործող իշխանությունից:

Արդարադատության համակարգի անկախության անհրաժեշտությունն այնքան ակնհայտ է, որ պաշտոնատար անձինք ևս չեն խուսափում այդ մասին բացահայտ խոսելուց: «Ամեն դատավոր ինչ-որ չափով ինչ-որ մեկից միշտ կախված է և ինչ-որ մեկից

անկախ է: Խնդիրն առաջին հերթին դատավորի ներքին անկախությունը բարձրացնելն է, որպեսզի դատարանը վճիռ կայացնելիս իրեն չզգա բացարձակ անկախ, այդ թվում՝ նաև օրենքից ու օրենսդրության պահանջներից, բայց միևնույն ժամանակ կաշկանդված լինի օրենքով ու օրենքի պահանջներով», - անդրադառնալով դատավորների անկախությանը՝ նշել է արդարադատության փոխնախարար Արամ Օրբելյանը:

Ըստ նրա՝ դատավորը պետք է ունենա այն ներքին անկախությունը, որով կկարողանա մերժել իրեն դիմած անձին՝ կլինեն դրանք կողմերի փաստաբանները, թե այլ մարդիկ: Փոխնախարարի խոսքով՝ մի շարք գործող մեխանիզմներ կան, համաձայն որոնց՝ դատավորը պարտավոր է ցանկացած միջամտության մասին անմիջապես տեղեկացնել էթիկայի հանձնաժողովին:

Ընտրողական արդարադատությունը և օրենքի խտրական կիրառությունը

ՀՀ դատական համակարգի անկախության հարցի քննարկումից հետո առավել կարևոր հարցը դատարանների արդարացիության հարցն է, որը դրսևորվում է հիմնականում ընտրողական արդարադատության և օրենքի խտրական կիրառության խնդիրներով: Այստեղ նույնպես մեծ նշանակություն ունի հասարակական ընկալումը՝ կասկածն այն բանի հանդեպ, որ թեև ձևականորեն պահպանվում է օրենքի տառը, սակայն ընդունված որոշումներն արդարացի չեն, դատարանը կողմնակալություն և խտրականություն է դրսևորել, և այլն:

Արդարադատության խտրականությունը: Անարդարության հետ առնչվող հիմնարար հարցը դատարանների խտրական վերաբերմունքն է: Մշտապես շրջանառվում է այն կարծիքը, թե արդյոք մյուս բոլոր դեպքերում, երբ նույն արարքը կատարելին իշխանության ներկայացուցիչները, պատիժը նույնը կլիներ: Այսինքն՝ եթե նույնիսկ կոնկրետ գործով հաղթում է

արդարադատությունը, միևնույն է, չի պահպանվում այն կարևոր սկզբունքը, որ օրենքի առաջ բոլորն են հավասար:

Ինչպես նշել է լրագրող Գայանե Առուստամյանը, թեև հանցագործությունն արդարացում չունի, այնուամենայնիվ, արդարադատությունն իրականացվում է միայն խեղճ մարդկանց հանդեպ:

Ընտրողական արդարադատության իրականացման օրինակներ: Ընտրողական արդարադատության օրինակներ ժամանակ առ ժամանակ արժարժվում են էլեկտրոնային լրատվամիջոցներում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին և նրան, թե լրատվամիջոցներն ինչպես են մեկնաբանել դրանք:

Վահե Ավետյանի գործ: Այս գործում կասկածներ էին առկա հատկապես ընթացող նախաքննության ուղղորդման կապակցությամբ: Տուժողների իրավահաջորդների փաստաբանները հայտարարություն էին տարածել, որտեղ նշում էին. «Նախաքննության մարմնի պատասխան գործողություններից և հայտարարությունից պարզ է դառնում, որ քրեական դատավարության օրենսգրքի բազում հոդվածներին հղումներով (նախաքննական մարմինը) ցանկացել է ընդամենը քողարկել իր գործողությունների ընթացքում տուժողի իրավահաջորդի իրավունքների շարունակական խախտումները:

Հանրային մեծ հնչեղություն ունեցող գործով մեր՝ արդյունավետ քննություն ապահովելու պահանջի նման անտեսումն անհամատեղելի է ոստիկանության բարձր մակարդակով բազմիցս հնչեցված՝ գործի հրապարակային քննություն ապահովելու հավաստիացումների հետ: Հայտնում ենք, որ որևէ պարագայում չենք հրաժարվելու սույն գործով բաց և հրապարակային գործելու մեր մտադրությունից և նույնն էլ խորհուրդ ենք տալիս ոստիկանությանը: Որպես առաջին քայլ՝ պահանջում ենք անհապաղ մեզ տրամադրել սույն գործով բոլոր փաստաթղթերն ու նյութերը, որոնց քրեական

դատավարության օրենսգրքի ուժով մենք ունենք ծանոթանալու իրավունք»:

Նարեկ Ափինյանի գործ: Այս դեպքը դիտարկվել է դատարանի կողմից նախաքննական մարմնի գործողությունները թաքցնելու տեսանկյունից: Նարեկ Ափինյանի նկատմամբ ոստիկանության աշխատակիցների կողմից ճնշումները շարունակվել են նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո: Այս մասին Նարեկ Ափինյանը գրավոր դիմում է ներկայացրել նախաքննությունն իրականացնող մարմնին, որը նույնպես անտեսվել է դատարանի կողմից:

Ինչպես նշվել է լրատվամիջոցում, չնայած այս ամենին՝ դատավորը հերթական անգամ կոծկել է քննիչի անօրինական գործողությունները:

«Հրապարակ» օրաթերթ: Այս գործը լայն հնչեղություն էր ստացել, քանի որ վերաբերում էր լրատվամիջոցի նկատմամբ իրականացվող դատավարությանը: Տարբեր հասարակական կառույցներ, ՀԿ-ներ, անհատներ իրենց բողոքն էին հայտնում կոնկրետ գործով դատարանի անարդարացի որոշումների վերաբերյալ:

Այսպես, «Իրավունքի և ազատության կենտրոնն» անդրադարձել է «Հրապարակ» օրաթերթի դեմ կիրառված արգելքին՝ չհրապարակել նյութեր թերթի դեմ հարուցված քրգործով դատավարության վերաբերյալ: Կենտրոնի տարածած հայտարարության մեջ, մասնավորապես, ասվում է, որ «Հրապարակ» թերթի դեմ սկսվել է հերթական դատական գործը:

Օրաթերթը միայն հարկադիր կատարողի այցելությունից է տեղեկացել այն մասին, որ ոչ միայն ներքաշված է հերթական դատական քաշքշուկի մեջ, այլև դատարանի որոշմամբ զրկված է խոսքի ազատությունից: Հարկադիր կատարողի ներկայացրած փաստաթղթից պարզվում է, որ դատարանը վճռել է, որ պետք է

«հայցագնի՝ 3.000.000 ՀՀ դրամի չափով արգելանք դնել պատասխանող «Հրապարակ» օրաթերթ ՍՊ ընկերությանը պատկանող գույքի վրա, ինչպես նաև արգելել «Հրապարակ» օրաթերթ ՍՊ ընկերությանը սույն քաղաքացիական գործով առկա վեճի հետ կապված որևէ տեղեկատվության տարածումը՝ մինչև գործով վերջնական ակտ կայացնելը»:

Այս գործում նորությունը ոչ թե այն էր, որ լրատվամիջոցի դեմ դատական վեճ է բացվել և որպես վնասի հատուցում պահանջվել է բարձր գումար, այլ այն, որ դատական ակտով մամուլի միջոցը զրկվել է խոսքի ազատությունից:

Դատարանի այս քայլը դատապարտող մի շարք հայտաբարություններ եղան: Շատ փորձագետներ կարծիքներ հայտնեցին, որ այս տիպի գործերը, որպես կանոն, միտված են ոչ թե հայցվորների պատիվն ու արժանապատվությունը վերականգնելուն, ինչպես հայտարարվում է դատարան դիմողների կողմից, այլ աստղաբաշխական տուգանքներով լրատվության միջոցը ձեռնասույն դարձնելուն կամ իսպառ ոչնչացնելուն:

«Հրապարակ» օրաթերթի խոսքի ազատության սահմանափակման այս որոշումը փորձ արվեց հաղթահարվել: Մասնավորապես, կոչ արվեց մյուս լրատվամիջոցներին «սույն քաղաքացիական գործով առկա վեճի հետ կապված» հանդես գալ բազմազան մեկնաբանություններով ու հրապարակումներով: Մա կարող է լինել խոսքի ու մամուլի ազատության դեմ ուղղված իշխանությունների ու իշխանավորների թելադրանքով գործող դատարանի հակասահմանադրական որոշման լավագույն պատասխաններից մեկը:

Նշենք, որ նմանատիպ գործերի քննության ժամանակ դատարանների ընդունած որոշումները բավականին սասանում են դատարանների հեղինակությունը, քանի որ դրանք գտնվում են քաղաքացիական հասարակության մշտական հսկողության տակ:

«Ժողովուրդ» օրաթերթ: «X գրուպ» ընկերության սեփակա-նատեր Խաչիկ Խաչատրյանը «Ժողովուրդ» օրաթերթի դեմ դատական հայց էր ներկայացրել՝ պահանջելով իր և Երևանի թոչնաֆարրիկայի պատիվն ու արժանապատվությունը, գործարար համբավն արատավորելու և վիրավորելու համար որպես փոխհատուցում վճարել երեք միլիոն դրամ, իսկ Երևանի Կենտրոն ու Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, մասնակիորեն բավարարելով Խաչատրյանի կողմից ներկայացրած միջնորդությունները հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, որոշել է արգելանք դնել «Ժողովուրդ» օրաթերթի և լրագրող Ս. Գրիգորյանի գույքի վրա:

Այնուհետև 2012 թ. դեկտեմբերի 28-ին «Ժողովուրդ» օրաթերթի լրագրող Սոնա Գրիգորյանը դատական հայց էր ներկայացրել ընդդեմ գործարար Խաչիկ Խաչատրյանի՝ պահանջելով հրապարակային ներողություն խնդրել՝ իրեն վիրավորելու համար: Սակայն դատավորը մերժել էր լրագրողի ներկայացրաց հայցը՝ վճռի մեջ պարզաբանելով, որ հայցվորի կողմից ներկայացված ապացույցներով չի հիմնավորվել վիրավորանքի հրապարակային լինելը: Ավելին, դատավորը պահանջել էր, որ «Ժողովուրդ» օրաթերթից և Սոնա Գրիգորյանից բռնագանձվի 100.000 դրամ, որպես դատական ծախս և փաստաբանի վարձատրության վճար: Այս կապակցությամբ օրաթերթը գրել էր. «Լավ է, որ չի պարտադրել ներողություն խնդրենք՝ Խաչիկի եւ նրա փաստաբանների ժամանակը խլելու համար»⁴: Որոշ լրատվամիջոցներ էլ նշել էին, որ դատավորը իր կայացրած վճռով ըստ էության փաստում է, որ այդուհետ ցանկացած գործարար կարող է հայիոյել և անպատվել լրագրողներին՝ վստահ լինելով, որ դրա համար որևէ պատժի չի ենթարկվի:

«Լիբեր»: Ինչպես նշվում է էլեկտրոնային համապատասխան լրատվամիջոցում, Վարչական առաջին ատյանի դատարանի դատավորներից մեկի վերջին վճիռն առանց հումորի դժվար է

⁴ «Դատավորի Երևանյան գաստրոլները», «ԺՈՂՈՎՈՒՐԴ» օրաթերթ, 30.04.2013, - <http://www.armlur.am/index.php?page=article&id=45847>:

ընկալել: Նա վճռել է Վարչական դատարան կոլեկտիվ հայց ներկայացրած 26 բնակիչներից բռնագանձել 40.600 դոլարին համարժեք դրամ՝ հոգուտ տխրահոշակ «Լիբեր» շինկազմակերպություն ՍՊԸ-ի:

Նույն լրատվամիջոցում վեր են հանվել նախաքննության անօրինական գործողությունները, ցույց է տրվել, որ քննչական մարմինը գործը վերին աստիճանի թերի, փնթի և բազմաթիվ խախտումներով քննելուց հետո այն ուղարկել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի չառնելով բազմաթիվ հանգամանքներ: Լրատվամիջոցը կասկած էր հայտնում դատավորի գործողությունների մասին, որովհետև վերջինս մերժում էր մեղադրանքը հերքող ցանկացած ապացույցի ձեռք բերման և հետազոտման մասին միջնորդությունները և աչք էր փակում քրեական հետապնդման մարմնի կողմից թույլ տված խախտումների վրա, որովհետև կարող էին այնպիսի ապացույցներ հայտնվել, որոնցով կարող են հերժվել մեղադրանքները:

Այս գործը նաև դժգոհություն էր առաջացրել իր անընդհատ ձգձգումների և դատավորի առողջական վիճակի հետ կապված նիստերի չկայանալու պատճառով:

ՀԱԿ ակտիվիստներ: Այս գործն ի սկզբանե քաղաքական ուժերի և ակտիվ քաղաքացիական հասարակության ուշադրության կենտրոնում է եղել: Հայաստարարություններ են եղել, որ գործը «սարքված է եղել» ՀԱԿ-ի շխանություն երկխոսությունը դադարեցնելու համար: Գործով հետագա որոշումները, նույնիսկ էթե դրանք ամբաստանյալների համար բարենպաստ են եղել, ընկալվել են ոչ թե որպես արդարության հաղթանակ, այլ որպես քաղաքական պատվերի փոփոխություն:

Այսպես, Հայ ազգային կոնգրեսի երիտասարդներ Արեգ Գևորգյանը, Վահագն Գևորգյանը և Մահակ Մուրադյանը Հատուկ քննչական ծառայությունից (ՀՔԾ) ստացել են որոշում այն մասին,

որ կարճվել է իրենց նկատմամբ հարուցված քրեական գործը՝ 2011-ի օգոստոսի 9-ի միջադեպի հետ կապված՝ ապացույցների բացակայության պատճառով: Այդ կապակցությամբ փաստաբան Հովիկ Արսենյանը դիմել էր ՀՔԾ ՀԿԳ քննիչ Ա. Մինասյանին՝ այդ որոշումը չեղյալ համարելու համար, այսինքն Կոնգրեսի երեք երիտասարդների մասով քրեական գործի կարճման հիմքերն ապացույցների բացակայությունից վերափոխելու հանցակազմի բացակայության: Մակայն փաստաբանի դիմումը մերժվել էր, որը և այդ մարմնի քաղաքական պատվեր կատարելու համոզմունքի հիմքն էր հանդիսացել:

«Նույն դրվագով, նույն հիմքով չորս մարդ դատապարտվում է ազատազրկման, այսինքն համարվում է, որ նրանց մեղքը ապացուցված է, և միննույն դրվագով, միննույն ապացույցներով երեք մարդ արդարացվում է՝ ապացույցներ չլինելու պատճառաբանությամբ: Սա մեզ մտորումների տեղիք է տալիս և ստիպում է մեզ ևս մեկ անգամ համոզվել, որ սա քաղաքական հաշվեհարդարի յուրատեսակ մի ձև է», - ասել է ակտիվիստ Արեգ Գևորգյանը:

Գագիկ Խաչատրյանի դեմ մահափորձի գործ: Այս գործը՝ որպես տարվա անարդար գործ, իրավաբան Տիգրան Աթանեսյանը առանձնացրեց՝ նշելով, որ դրա արդյունքում 6 անմեղ մարդիկ են ազատազրկվել:

Վարդան Օսկանյանի գործ: Հասարակական լայն արձագանք էր առաջացրել Վարդան Օսկանյանին առաջադրված մեղադրանքը փողերի լվացման մեջ:

Ի սկզբանե հասարակության մեջ կասկածներ էին ի հայտ եկել, որ սա քաղաքական պատվեր է, քանի որ գործը հնչեղություն ստացավ միայն այն ժամանակ, երբ նախկին արտգործնախարարը ուր քննադատության ենթարկեց իշխանություններին:

Փուլիկների գործ: Անարդարությունն այս գործում արտահայտվել է նրանում, որ պատժվել են ոչ իրական մեղավորները, իսկ պատժվողը, ըստ էլեկտրոնային լրատվամիջոցներում հայտնված տեսակետների, ընդամենը քավության նոխագ էր:

Միլվա Ասատրյան: Այս գործով ցույց է տրվում ՀՀ-ում վերջնական արդարադատության բացակայության փաստը: «Պատկերացրեք, մարդը դատապարտվել է ինը տարի ազատազրկման, որովհետև նրա նկատմամբ կիրառում են հակասահմանադրական նորմ,- ասում է Կարեն Մեժլումյանը,- չորս անգամ դիմում է Սահմանադրական դատարան, չորս անգամ էլ ՄԴ-ն նրա նկատմամբ կիրառված նորմը ճանաչում է հակասահմանադրական: Նա ուրախանում է, բողոքում է Վճռաբեկ դատարան, բայց բողոքը վերադարձնում են: Խոսքը քրեական գործով Միլվա Ասատրյանի դեպքն է: Եվրոպական դատարանը նրա ներկայացրած դիմումի հիման վրա ՀՀ-ի դեմ վճիռ է կայացրել: Մակայն մարդն իր խախտված իրավունքը վերականգնելու հնարավորություն չունի»:

Խափանման միջոցների անարդար կիրառությունը: ՀՀ դատարանները գրեթե 100 տոկոսով բավարարում են դատախազության միջնորդությունները խափանման միջոցների վերաբերյալ: Ընդ որում, դատախազները հիմնականում հակված են լինում կալանավորում խափանման միջոցը ընտրել նույնիսկ այն դեպքերում, երբ դրա կարիքը բոլորովին էլ չկա: 2011թ.-ին նախաքննության մարմինների կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու 3262 միջնորդություն է ներկայացվել, որոնցից բավարարվել է 3088-ը կամ 94,7%-ը:

Ըստ փաստաբանների գործադուլային նախաձեռնող խմբի՝ «2012թ. ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններ ներկայացված միջնորդությունները կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ բավարարվել են շուրջ 96%-ը»:

«Կալանքը՝ որպես խափանման միջոց, պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում: Մինչդեռ Հայաստանում դատարաններն առանց քրեական գործով ձեռք բերված որևէ հիմքի անձանց նկատմամբ կալանքն ընտրում են որպես խափանման միջոց», - «Փաստինֆո» գործակալության թղթակցի հետ զրույցում նշել է փաստաբան Լուսինե Սահակյանը: Ըստ նրա՝ կալանքը պետք է կիրառվի այն դեպքերում, երբ առկա են 135-րդ հոդվածի պայմանները, և երբ վարույթ իրականացնող մարմինը հիմնավորում է, որ խափանման այլ միջոցի կիրառումը չի կարող արդյունավետ լինել: Դրա հետ մեկտեղ պետք է առկա լինի հիմնավոր կասկածը: Սակայն փաստաբան Անի Թորոսյանի կարծիքով, հաճախ քննիչները դատարան են ներկայացնում կալանավորման վերաբերյալ բացարձակ անհիմն միջնորդություններ, որոնց ոչ մի հիմք կամ նյութ կցված չի լինում:

«Դատարանները սկսում են քարկոծել, քննադատել, որ քննիչները չեն կարողանում հիմնավոր միջնորդություններ ներկայացնել, շատ դեպքերում նույնիսկ ամոթանք են տալիս միջնորդություն ներկայացրած քննիչին և վերջում բավարարում միջնորդությունը՝ հորդորելով, որ հաջորդ անգամ հիմքեր գտնե կցեն: Այդ խայտառակ որոշումները իհարկե բողոքարկվում են ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, և որպես կանոն՝ բողոքները մերժվում են, իսկ Վճռաբեկ դատարանը վերադարձնում է ներկայացված վճռաբեկ բողոքները: Ինչից էլ սկսվում է մեր քրեական արդարադատության մղձավանջը», - նշել էր նա՝ փաստաբանների 2013 թվականի հունիսի 10-ին կայացած գործադուլի ժամանակ:

«Քրեական դատավարության օրենսդրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով, ինչպես նաև Եվրոպական դատարանի բազմաթիվ նախադեպային որո-

⁵ «Փաստաբանները հորդորում են Վճռաբեկ դատարանին սվիններով չընդունել իրենց պահանջը», Ռուզան Մինասյան, 10.06.2013, - <http://www.aravot.am/2013/06/10/253157/>:

շումներով հատակ սահմանված է՝ երբ դատարանն ընտրում է կալանքը, պետք է հիմնավորի, թե ինչու է բացառիկ խափանման միջոցը՝ կալանքն ընտրում, ինչու խափանման մյուս միջոցները չեն կարող արդյունավետ լինել», - նշել է Լ. Սահակյանը՝ ավելացնելով, որ պատճառն օրենսդրական դաշտը չէ, այլ դատարանի մեղադրական կողմնորոշվածությունը:

Միջազգային իրավունքի նորմերի անտեսումը: Շատ դեպքերում դատարանները ներպետական օրենքների՝ միջազգային հանրաճանաչ նորմերի հետ հակասությունների պայմաններում առաջնությունը տալիս են առաջինին, որից տուժում է բուն արդարադատությունը: Նմանատիպ դատական որոշումներն են, որ հետո Ստրասբուրգի դատարանում առաջացնում են զգալի նյութական և բարոյական վնաս ՀՀ համար:

Դատավոր Լեոնիկ Աթանյանն իր կողմից կայացված դատավճռում արձանագրել էր, որ ամբաստանյալի նկատմամբ բռնությունները կիրառվել են ճշմարտությունը պարզելու համար: Դատավորին այս դեպքում չպատժեցին, և պաշտպանական կողմի բողոքներն էլ մնացին անհետևանք:

Սակայն, ինչպես նշվում է էլեկտրոնային լրատվամիջոցում, երբ Եվրոպական դատարանում խայտառակվեցին, երբ Եվրոպայի բոլոր իրավաբաններն իմացան, որ դեռ կա մի երկիր, որտեղ միջնադարյան ինկվիզիցիայի բանաձևերը գործում են, դրանից հետո Լեոնիկ Աթանյանին պատժեցին նկատողությամբ՝ մեկ տարվա աշխատավարձից 25 տոկոս պահում կատարելով:

Այսինքն՝ օրենքը այս դեպքում կիրառվեց միայն այն ժամանակ, երբ բավականին սասանվել էր ՀՀ միջազգային հեղինակությունը, և ուղղված էր այդ հեղինակության վերականգնմանը:

Խտրական մոտեցման կիրառման մյուս դեպքը վերաբերում է ցմահ դատապարտյալների՝ ձեռնաշղթաներով դատական նիստին մասնակցելուն: Իրավապատպան Ավետիք Իշխանյանը նշել է, որ որևէ իրավական նորմ չի կարգավորում այն, ըստ այդմ էլ՝ անհավասար պայմաններ են ստեղծվում կողմերի համար:

ՀՀ պետական մարմինների դեմ դատարանների որոշումների բացակայություն: ՀՀ դատարաններն անգամ ամենաամենա որոշումների դեպքում չեն համարձակվում կասկածի տակ դնել դրանց օրինականությունը, քանի որ դրանք գործադիր իշխանության որոշումներ են: Մասնավորապես, Էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատարանի ստեղծվելուց ի վեր այդտեղ մուտք է եղել ՀՀ կառավարության նորմատիվ որոշումները վիճարկելու 30 հայցադիմում, սակայն կառավարության նորմատիվ որոշումներն անվավեր ճանաչելու ցուցանիշը 0% է, այսինքն՝ Վարչական, Վարչական վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կողմից կառավարության որևէ նորմատիվ որոշում անվավեր չի ճանաչվել:

Հակվածություն մեղադրական դատավճիռներին: Սա ամենից հուզող և կարևոր խնդիրներից մեկն է, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ դատարանների անկախության բացակայությամբ, կոռուպցիայով, դատավորի ներքին գրաքննությամբ և այլն: Արդարացնող դատավճիռներն այնքան քիչ են, որ այդպիսի ակտ կայացվելու դեպքում այն գրավում է լրատվամիջոցների ուշադրությունը:

Այսպես, 2011թ.-ին ՀՀ առաջին ատյանի դատարաններում քրեական գործերով 4874 անձի վերաբերյալ դատական ակտ է կայացվել, որոնցից լրիվ արդարացվել են ընդամենը 54 անձ կամ 1,1%-ը:

Իրական մրցակցության բացակայություն: Հայաստանում քրեական դատավարությունը մրցակցային է, սակայն դատարանները մրցակցությունը ճիշտ չեն ընկալել ու կիրառում:

«Pastinfo.am»-ի թղթակցի հետ գրույցում նման տեսակետ է հայտնել փաստաբան Հայկ Ալումյանը: «Մենք՝ պաշտպաններս, մրցում ենք դատարանների, դատավորների ու դատախազների դեմ: Հետո էլ դատարանը՝ որպես մեր մրցակից, մի դատական ակտ է կայացնում ու որոշում, թե մեզանից ով հաղթեց», - ասաց նա: Եզակի բացատրություններով՝ դատավորներն, ըստ նրա, «թեքված են դատախազության կողմը»:

ՀՀ դատական համակարգի կառուցվածքային խնդիրները: ՀՀ արդարադատության որակը և առկա անարդարությունները հաճախ պայմանավորված են լինում դատական համակարգի կառուցվածքային խնդիրներով: Մասնավորապես, հասարակության շրջանում հնչեղություն են ստանում այնպիսի հարցեր, թե ում ծանոթներն են նշանակվում դատավորներ, արդյոք նրանց փորձը բավարար էր դատավոր դառնալու համար: Բարձրաստիճան պաշտոնյանների և ազդեցիկ անձանց որդիների՝ դատավոր նշանակվելու լուրերը հանրության կողմից գնահատվում են որպես որոշ փակ շրջանակների և ոչ թե արժանավորների առաջխաղացում:

Հիասթափության մեծ չափաքանակ է ավելանում ՀՀ քաղաքացիների մոտ, երբ որևէ պաշտոնատար անձ հասարակական ընկալմամբ ոչ արդարացի գործունեության, իշխանություններին ծառայելու համար տարիների ընթացքում «աշխատանքային հաջողություններ» է արձանագրում, որը իսպառ վերացնում է արդարության որևէ զգացում շարքային քաղաքացու մոտ:

Եվրոպական դատարանի որոշումների հետևանքները: Պաշտոնական տվյալներով՝ Հայաստանի Հանրապետությունը 2013-ի հունիսի 21-ի դրությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումներով սեփական երկրում արդարադատություն չգտած և Հայաստանի դեմ ՄԻԵԴ

հայց ներկայացրած քաղաքացիներին վճարել կամ վճարելու է 570.294 եվրոյին համարժեք դրամ:⁶

Վերջին տարիներին արդիական դարձած մյուս խնդիրը վերաբերում է Եվրոպական դատարանի կողմից կայացրած վճիռներից հետո համապատասխան սխալ որոշում կայացրած դատավորի պատժվել-չպատժվելուն: Հատկապես փաստաբանները գտնում են, որ նշված դատավորներն անպայման պետք է պատասխանատվության ենթարկվեն: Որոշ լրատվամիջոցներ և փաստաբաններ բարձրացնում են այն հարցը, թե ինչու՞ եվրոպական դատարանում պարտվելուց հետո դատավորի կայացրած սխալ որոշման համար չի վճարում այդ նույն դատավորը, այլ վճարում է պետությունը՝ հարկատուների հաշվին: Նրանք առաջարկում են կատարել օրենսդրական փոփոխություն, որով այդ հարցը վերջնական լուծում կստանա:

Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականը:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում նշվում է. «Մտահոգիչ է այն, որ դատախազությունն ընդհանուր առմամբ խափանման միջոց ընտրելու հարցը լուծելիս նախապատվությունը տալիս է կալանքի միջնորդություն դատարան ներկայացնելուն, մինչդեռ կալանքը պետք է դիտվի որպես բացառիկ խափանման միջոց և կիրառվի այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մյուս խափանման միջոցներով հնարավոր չէ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը քրեական վարույթի ընթացքում»:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին 2011թ. տարեկան զեկույցում (3-րդ կետ) նշվել է հետևյալը. «2011 թվականին Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության ամենամեծ խնդիրը և

⁶ «570 հազար 294 եվրո ՀՀ պետությունից՝ արդարադատության պակասի համար. Մարդու իրավունքների եվրոպական դատարան», 08.07.2013 - <http://medialab.am/news/id/4344>:

բացթողումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին և հատկապես դատական իշխանության համակարգում առկա անարդարություններին և ապօրինություններին:

Ի պատասխան պաշտպանի տարեկան զեկույցի ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայության պետ Արսեն Բաբայանը նշել էր, որ պաշտպանի կողմից թերացումների արձանագրումն արդեն իսկ «զավեշտալի» է, և որ պաշտպանին հավանաբար «շփոթության» մեջ է գցել նախարարության անվան միջի «արդարադատություն» բառը: «Իր զեկույցում ՄԻՊ-ն արձանագրել է «թերացումների» 3 կետ: Երեքն էլ ամբողջությամբ զուրկ են հիմնավորումներից: Ներկայացված են վերացական դատողություններ, օրինակ նշվում է՝ «Խիստ մտահոգիչ է դատական իշխանության համակարգում առկա անարդարությունների և ապօրինությունների բազմաթիվ դեպքերի առկայությունը»:

Իրականում խիստ մտահոգիչը տվյալ դեպքում այն է, որ ՄԻՊ-ը, բացի այն, որ տեղյակ չէ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքից, նաև տեղյակ չէ Սահմանադրության 5-րդ հոդվածից, ըստ որի՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»,- ավելացնում է պարոն Բաբայանը:⁷

Մարդու իրավունքների ռտնահարումները արդարադատության համակարգում

Ըստ փաստաբան Լուսինե Սահակյանի՝ Հայաստանի դատարաններում համատարած խախտվում են մարդու

⁷ «Դատական դեպարտամենտն արձագանքում է օմբուդսմենին», 08.03.2013, - <http://www.hraparak.am/news/view/29276.html>:

իրավունքները: Նա հատկապես ընդգծել է անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և կալանքի ժամկետը երկարաձգելու պրակտիկան՝ նշելով, որ համատարած խախտումներով են կայացվում որոշումները, ինչը հիմք է տալիս կարծելու, որ դա իրականում դատման պրոցես է:

Փաստաբանը նշել է, որ կայացված կալանքի որոշումները երբեմն զավեշտի են վերածվում, քանի որ անձանց անուններն արտատպվում են. նախորդ որոշման մեղադրյալի անունը մնում է նույնը:

Ղատավորը՝ բռնության կիրառող: Լրատվամիջոցներից մեկը դատավորի կողմից ամբաստանյալին ծեծի ենթարկելու դեպք է ներկայացրել: Լոռու մարզի դատավոր Արման Թովմասյանի և դատարանի 4 կարգադրիչների կողմից ծեծի է ենթարկվել ամբաստանյալ Աշոտ Հարությունյանը, որի հայրը վերաքննիչ բողոք էր ներկայացրել:

Ապօրինի որոշումներ: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորներից մեկի որոշմանն է անդրադարձել «News.am»-ի թղթակցի հետ զրույցում փաստաբան Արամազդ Կիվիլայանը:

Ըստ փաստաբանի՝ առաջին անօրինականությունն այն է, որ այդ դատավորն «... իրավունք չունի հրապարակել որոշում, որը չի ստորագրել դատավորներից որևէ մեկը: Փաստացի որոշում գոյություն չունի, ոչ տպված է, ոչ էլ կնքված և ստորագրված»:

Մեկ այլ փաստաբան հիշում է մեկ որոշում, որի սկիզբը վերաբերում էր մի անձի, իսկ որոշման վերջը՝ մեկ այլ անձի: Այդ որոշման վերջում ստորագրել ու կնիք էին դրել 5 դատավոր, սակայն ոչ ոք չէր նկատել առկա սխալը:

Անհիմն կալանավորումներ: Ինչպես մատնանշել է լրատվամիջոցներից մեկը, կոնկրետ գործով, որը դատաքննության փուլում էր գտնվում 2012թ. հունիսից, դատավորն ամեն անգամ

նիստը հետաձգում էր երկար կամ անորոշ ժամանակահատվածով: Ամբաստանյալն այդ ժամանակահատվածում կալանավորված է եղել, սակայն դատարանը մերժել է ամբաստանյալին կալանքից գրավով ազատելու մասին միջնորդությունները՝ ամեն անգամ բերելով նույն պատճառաբանություններն այն մասին, որ գործի դատական քննության ընթացքում ամբաստանյալի նկատմամբ խափանման միջոցը փոփոխելու հիմքեր չի հայտ չեն եկել:

Պաշտպանական կողմը նշել է, որ դատարանը որևէ կերպ ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ.

- մեղադրյալի խնամքին են գտնվում 3 մանկահասակ երեխաները, 1-ին կարգի հաշմանդամ քույրը և 2-րդ կարգի հաշմանդամ մայրը, որոնց ապրուստի համար միջոցները գոյանում էին մեղադրյալի վաստակից,
- մեղադրյալը 1,5 տարի կալանքի տակ է գտնվում,
- դատավորի պատճառով 100 օր գործը չի քննվել (40 օր գործը չի քննվել դատավորի արձակուրդ գնալու պատճառով, այնուհետև 61 օրով նիստը հետաձգվել է դատավորի հիվանդության պատճառով),
- մեղադրյալի ազգականների կողմից որպես գրավ առաջարկվել է բնակարանի շուկայական արժեքի չափը, որը կազմում է 25.000.000 ՀՀ դրամ:

Դատավորի համար հիմք չեն հանդիսացել նաև Եվրոպական դատարանի կողմից սահմանված անձին կալանքի տակ պահելու չափորոշիչները:

Առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով Սահմանադրական դատարանի այն որոշումը, որով հստակ սահմանվել է, որ «վնասի փոխհատուցման պահանջի իրավաչափությունը որոշելիս դատարանները պարտավորվում են հաշվի առնել լրագրողի միջոցները, եկամուտների չափը, որպեսզի չսահմանվի վերջիններիս համար անհամաչափ ծանր նյութական բեռ, որը բացասական վճռորոշ ֆինանսական ազդեցություն կունենա

լրագրողի գործունեության համար», որոշում է կայացրել «Ժողովուրդ» օրաթերթի դեմ, որը դրա պատճառով այն գտնվում էր փակման եզրին:

Այլ խնդիրներ: Լինում են նաև անփութության դրսևորումներ, օրինակ՝ 2012թ. հունիսի 27-ին ՀՀ Վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի բողոքը, սակայն 5 ամիս շարունակ դատարանի կողմից գործի քննության օր չի նշանակվել: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչները 2012թ. նոյեմբերի 27-ին դիմում-բողոք են ներկայացրել ՀՀ Վճռաբեկ դատարանին՝ դատաքննության օր նշանակելու պահանջի մասին, որից հետո միայն կազմակերպությունը ստացել է ծանուցագիր:

Փաստաբանները ոչ պակաս կարևոր խնդիր են համարում այն, որ Վճռաբեկ դատարանը, Սահմանադրությամբ կոչված լինելով ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը, հենց ինքն է հաճախ անտեսում իր իսկ արտահայտած իրավական դիրքորոշումները՝ երբեմն էլ կայացնելով նախկին որոշումներին ուղղակիորեն հակասող նորանոր որոշումներ՝ առանց պատճառաբանելու, թե ինչու է շեղվում սեփական նախադեպերից:

Վճռաբեկ դատարանը վերադարձրել էր փաստաբան Գևորգ Գյոզալյանի ներկայացրած բողոքը: Փաստաբանը հայտարարել էր, որ ընդհանուր իրավասության դատարանը տվյալ գործով վճիռ է կայացրել առանց ապացույցները հետազոտելու, որի հիմքով ինքը բողոք է ներկայացրել վերադաս երկու դատական ատյաններ: Վճռաբեկ դատարանը, բողոքը վերադարձնելով, փաստորեն, նախադեպ է ստեղծել ստորադաս դատարանների համար, որ կարող են առանց ապացույցները հետազոտելու դատական ակտ կայացնել:

Իրավաբան Արտակ Ձեյնալյանը նշել է, որ իրենք մի քանի անգամ դիմել են Վճռաբեկ դատարան, որպեսզի բեկանվեն այն դատական ակտերը, որոնք ընկած են եղել ՄԳ գործի հիմքում, սակայն Վճռաբեկ դատարանը դրանք չի վերանայել: Ձեյնալյանը

նշել է, որ «օրինական ուժի մեջ չի կարող մնալ այն դատական ակտը, որում կիրառված է Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված օրենքի դրույթ»:

Բողոքը վարույթ չընդունելու ակնհայտ օրինակ է Սիլվա Ասատրյանի գործը, որի վերաբերյալ նորմը Սահմանադրական դատարանը հակասահմանադրական էր ճանաչել, սակայն այն Վճռաբեկ դատարանը հետ էր վերադարձրել: Այս գործով ամբաստանյալը դատապարտվել էր 9 տարի ազատազրկման: Ըստ Կարեն Մեծումյանի՝ ՄԴ-ն մոտ 150-200 անձանց գործերում բացահայտել է հակասահմանադրական նորմ, բայց դրանցից որևէ մեկը չի վերանայվել Վճռաբեկ դատարանում:

Փաստաբանները եզրակացնում են, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու որոշումները չպատճառաբանելը (կամ հետագայում ըստ էության լուծող որոշմամբ չբացահայտելը), ինչպես նաև վճռաբեկ բողոքները վերադարձնելու որոշումները չպատճառաբանելը՝

1. Վճռաբեկ դատարանի որոշումներին զրկում է օրինական, համոզիչ և հեղինակավոր դատական ակտեր հանդիսանալու կարգավիճակից,
2. վնասում է վճռաբեկ վարույթում անձանց իրավունքների պաշտպանության հնարավորության կանխատեսելիությանը,
3. կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի,
4. կարող է հանգեցնել «երկակի ստանդարտներ»-ով խտրական որոշումների,
5. հանգեցնում է վստահության պակասի:

Ինչպես նշել է հայտնի փաստաբաններից մեկը, «... ներպետական դատարանները, ներառյալ նաև Վճռաբեկ դատարանը, տեսնելով, որ ՀՀ օրենքը հակասում է Կոնվենցիային, 2005-2007թթ. համառորեն կիրառել են Կոնվենցիայի չափանիշներին հակասող ՀՀ օրենքը», ինչը հանգեցրել է ՀՀ-ի դեմ կայացված որոշումների:

Սովորաբար դատապարտյալներն ավելի սահմանափակված վիճակում են բերվում դատարան, մինչդեռ իրավապաշտպան Ավետիք Իշխանյանի կարծիքով, դատապարտյալները սովորական կալանավորների նման պետք է բերվեն դատարան: Ըստ նրա՝ շատ հաճախ դատապարտյալների և առավել հաճախ ցմահ դատապարտյալների դատավարությունները ընթանում են քրեակատարողական հիմնարկներում, կատարվում է փակ դատավարություն, ինչը անհասկանալի է:

Կոռուպցիան արդարադատության համակարգում

«Անգամ չանդրադառնալով դատական կոռուպցիային, դրա դրսևորումներին, ծավալներին ու մեխանիզմներին՝ կարող ենք դարձյալ կրկնել, որ այս համակարգը խարան է մեր պետության համար, բոլոր ցավերի աղբյուրն է մեր քաղաքացու կյանքում, և ինչպես նշել է Հրայր Թովմասյանը՝ գարշապար է մեր արդարադատության համակարգում», - այսպիսի բնորոշումներ են առկա Էլեկտրոնային լրատվամիջոցներում ՀՀ դատական համակարգում տիրող կոռուպցիայի մասին:

Պետք է ընդգծել, որ «կոռուպցիա» հասկացությունը Էլեկտրոնային լրատվամիջոցների շրջանում կիրառվում է հիմնականում պաշտոնատար անձանց՝ կաշառք վերցնելու երևույթը նկարագրելու համար: Էլեկտրոնային լրատվամիջոցները խնդրին անդրադառնում են բավական ընդհանրական կերպով՝ չմատնանշելով կոռուպցիոն կոնկրետ դրսևորումներ:

Կոռուպցիոն դրսևորումները դատական համակարգում:

Էլեկտրոնային լրատվամիջոցների ուշադրությանն է արժանացել այն հանգամանքը, որ այժմ ոստիկանությունում ու դատախազությունում են գտնվում հարյուրավոր գործեր, որոնք կանխամտածված կերպով խիստ հողվածներով են ձևակերպված, և որոնց վերաձևակերպման համար քննիչը մի քանի հազար դոլար է պահանջում՝ չթաքցնելով, որ կկիսվի դատախազի ու դատավորի հետ: Նման իրավիճակում փաստաբաններին մնում է միայն ոչ թե

ապացուցել իրենց պաշտպանյալների անմեղությունը, այլ «ալիքներ գտնել», որոնց հնարավոր կլինի կաշառք տալ և փոխել հողվածը:

Մատնանշվել է նաև նախաքննության ժամանակ քննիչների գործողությունների «ազատությունը»: Մասնավորապես, թույլ վերահսկողության պայմաններում քննիչները գործողությունների լայն ազատություն են ստանում, ինչը կոռուպցիայի հիմք է:

ՀՀ արդարադատության համակարգում և մասնավորապես դատական համակարգում տիրող կոռուպցիայի մասին միջազգային կառույցները տվել են բազմազան գնահատականներ, որոնք որոշ չափով ընդունելի են նաև պետական մարմինների կողմից:

Մասնավորապես, «Transparency International» միջազգային հակակառուպցիան կազմակերպության զեկույցում նշվում է, որ Հայաստանի դատական համակարգի հիմնական խնդիրը շարունակում է մնալ անկախության և թափանցիկության անբավարարությունը, իսկ դատական համակարգը, ոստիկանության հետ մեկտեղ, համարվում է երկրորդ ամենակոռումպացված ոլորտը:

Էլեկտրոնային լրատվամիջոցները մատնանշում են 2009-2011թթ.-ին իրականացվող բարեփոխումների անարդյունավետությունը. «2009-2011թթ. մի շարք դատաիրավական բարեփոխումներ իրականացվեցին. Մի մասը իրականացվեցին, արդյունքներ չեղան, մյուսները մնացին թղթի վրա և ոչ մի բան չնպաստեց, որ ՀՀ-ում դատարանները անկախանան, այլ, ընդհակառակը, և դրա համար են մարդիկ բարձրաձայնում կոռուպցիայի, դատարանների անկախության բացակայության և իշխանություններից կախվածության մասին»:

ՀՀ դատական համակարգի բարեփոխումների հիմնական առանցքը մշտապես եղել է ոլորտում առկա կոռուպցիայի

սահմանափակումը: Այս տեսանկյունից էլեկտրոնային լրատվամիջոցները ցանկացած բարեփոխման մեկնարկի ժամանակ շեշտում են այն հանգամանքը, որ ոլորտում աշխատողների աշխատավարձն է պատճառը, որ ստիպված նրանք մասնակցում են սովերային գործարքների: Սակայն առկա է եղել նաև հակառակ տեսակետը, որ դա ընդհանրապես կապ չունի: Երբեմն-երբեմն տեսակետներ են հնչում, որ բարեփոխումներն այդպես էլ արդյունք չտվեցին և չնայած դատավորների աշխատավարձը բավական չափով բարձրացավ, բայց նրանք իրենց նախկին գործելակերպից չհրաժարվեցին:

Վճռաբեկ դատարանի կոռումպացվածությունը: Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ կոռուպցիոն դրսևորումներից առավել շատ խոսվում է՝ կապված այդ դատարանի գործելակերպի հետ: Մասնավորապես, փաստաբաններն արձանագրում են, որ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու որոշումները չպատճառաբանելը (կամ հետագայում ըստ էության լուծող որոշմամբ չբացահայտելը), ինչպես նաև վճռաբեկ բողոքները վերադարձնելու որոշումները չպատճառաբանելը կարող է հանգեցնել կոռուպցիոն ռիսկերի, որի մասին նշել է նաև Սահմանադրական դատարանը:

Ըստ Փաստաբանների պալատի անդամ Մնացական Սարգսյանի՝ «Լինում են գործեր, որոնց ժամանակ նույնանման փաստական հանգամանքներում Վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ է ընդունում, օրենքի խախտումով կայացնում է որոշում: Նույն փաստական հանգամանքներով բողոք ենք ներկայացնում, մերժում է առանց պատճառաբանության, թե ինչու վարույթ չի վերցնում: Մեզ համար անորոշ է՝ որն է ընտրության չափանիշը»:

Արդարադատության համակարգի գործունեության թափանցիկությունը

Վճռաբեկ դատարանի գործունեության թափանցիկությունը:
Դատարանների գործունեության թափանցիկության և

հրապարակայնության բացակայության մասին խոսելիս ամենից շատ անդրադարձ է եղել Վճռաբեկ դատարանի գործունեությանը: Այս առումով հնչում են միանշանակ բացասական գնահատականներ: Օրինակ, ըստ փաստաբան Նինա Կարապետյանցի՝ «ՀՀ քաղաքացու համար այսօր Վճռաբեկ դատարան գոյություն չունի. դատական գործը վարույթ չի ընդունվում, պաշտպանվող կողմը հակափաստարկներ ներկայացնելու հնարավորություն չունի»:

Tert.am-ի հետ զրույցում փաստաբան Հայկ Ալումյանը նշում է. «Վճռաբեկ դատարանը ան-կան-խա-տեսելի է: Եթե Դուք, Աստված ոչ անի, գտնվեք այն քաղաքացու տեղը, ով Վճռաբեկ բողոք է բերել, բայց իրեն փաստաբանը բացատրում է, որ հնարավոր չէ՝ նախապես իմանալ՝ էս մարդիկ քո վճռաբեկ բողոքը վարույթ կընդունեն՞, թե չէ: Մի պահ Ձեզ պատկերացրեք այդ քաղաքացու տեղը ու Ձեզ ոչինչ չեմ ունենա ավելացնելու: Պատկերացրեք ք, ոչ մի փաստաբան Ձեզ չի կարող հաստատ ասել՝ Ձեր գործը Վճռաբեկում կքննվի՞, թե չէ»⁸:

2012 թվականի հունվարից Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտում ստեղծվեց միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայություն, որը պետք է լուսաբաներ Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի նախագահի և դատական դեպարտամենտի գործունեությունը և ապահովեր զանգվածային լրատվության միջոցների ու դատական դեպարտամենտի համագործակցությունը: Չնայած այս ջանքերին, այնքան քիչ բան է արվել, որ հատկապես փաստաբանության հանրույթի կողմից մշտապես բացասական գույներով է ներկայացվում Վճռաբեկ դատարանի գործունեությունը:

⁸ «Վճռաբեկ դատարանն այլևս անկանխատեսելի է. փաստաբան Հայկ Ալումյան», 12.04.2013, - <http://www.tert.am/am/news/2013/04/12/hayk-alumyan/>:

Վճռաբեկ դատարանի նախագահին Փաստաբանների պալատի խորհրդի 5 անդամից ձևավորված հանձնախմբի կողմից ներկայացվել են հետևյալ պահանջները.

1. ՀՀ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս պետք է վարի արձանագրություն՝ ձայնագրառումով,
2. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված,
3. Վճռաբեկ դատարանը պետք է կատարի ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, ինչպես նաև Սահմանադրական դատարանի որոշումները:

Այս պահանջները հիմնավորելու համար փաստաբանները բավական երկար փաստարկների շարք էին մատնանշել, որոնք միանշանակ ցույց էին տալիս Վճռաբեկ դատարանի մեկուսի և հասարակությունից փակ գործունեությունը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը որոշումներ ուներ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքները ընդունելու և մերժելու վերաբերյալ, որոնք չեն կատարվել և կատարվում ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից:

Փաստաբանները մատնանշում են Սահմանադրական դատարանի որոշման խախտում: Այսպես, ըստ փաստաբանների՝ Վճռաբեկ դատարանը չի կատարում ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր նկատմամբ կայացված դատավճռի՝ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք, քանի որ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 22.12.2009թ. ՄԴՌ-849 որոշումով հստակ սահմանել է, որ ՀՀ Սահմանադրության նշված դրույթի համաձայն Վճռաբեկ դատարանը բոլոր դեպքերում պարտավոր է վարույթ ընդունել այն գործերով վճռաբեկ բողոքները, որոնցով Վերաքննիչ դատարանը փոփոխել է առաջին ատյանի դատարանի որոշումը: Սակայն Վճռաբեկ դատարանը շարունակում է բողոքներն առանց պատճառաբանության

վերադարձնել՝ չկատարելով Սահմանադրության իմպերատիվ պահանջը:

Արձանագրություն չվարելու խնդրի վերաբերյալ փաստաբանները մատնանշում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի դրույթները, որոնցից ակնհայտ է դառնում, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը պարտավոր է արձանագրություն վարել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս:

Մյուս խնդիրը վերաբերում է Վճռաբեկ բողոքների վերադարձման և վարույթ ընդունելու որոշումների պատճառաբանության բացակայությանը, մինչդեռ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը այդ առումով շատ հստակ է: Բացի այդ, մատնանշվում է նաև Սահմանադրական դատարանի ակտը, որով Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասով որոշման պատճառաբանման պարտադիր պայման չնախատեսելու, հետևաբար՝ արդարադատության բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չապահովելու առումով այն ճանաչվում է ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Փաստաբանները նշում են, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքները վարույթ ընդունելու հարցում հստակ չափորոշիչներ չսահմանելու պայմաններում բողոք բերող սուբյեկտների համար պարզ չի դառնում, թե ինչու Վճռաբեկ դատարանը որևէ բողոք ընդունում է վարույթ, իսկ մյուս բողոքը՝ ոչ:

Վճռաբեկ դատարանի նման գործելակերպի պատճառով փաստաբանները երկու տարի անընդմեջ գործադուլներ են իրականացրել, որոնց մասնակցել են հարյուրավոր փաստաբաններ: Վճռաբեկ դատարանին ուղղված փաստաբանների բաց նամակում գրված է՝ «Գիտակցելով, որ գործադուլը հանդիսանում է մեր բողոքի դրսևորման ամենածայրահեղ ձևերից մեկը, այնուամենայնիվ, որոշել ենք դիմել այս ծայրահեղ միջոցին, նկատի ունենալով, որ մինչև այժմ մեր կողմից ձեռնարկված տարաբնույթ միջոցները (բողոքներ տարբեր մարմիններին, ցույց,

հրապարակումներ ԶԼՄ-ներում և այլն) ոչ միայն չեն շտկել իրավիճակը, այլ՝ պարզապես անտեսվել են»։ Գործադուլների նպատակն է եղել հանրության և իշխանությունների ուշադրությունը սևեռել Վճռաբեկ դատարանի անընդունելի գործելակերպի վրա։ Գործադուլ անող փաստաբանները նշել էին, որ վճռաբեկ դատարանը կամայականության սկզբունքով է գործերը վարույթ ընդունում։ Ինչպես է դա արվում, դատարանը կամ գործը անհիմն պատճառաբանությամբ վարույթ չի ընդունում, կամ էլ ընդունում է՝ երկակի ստանդարտներ կիրառելով։

«Թեև ՀՀ Վճռաբեկ դատարանը Սահմանադրությամբ կոչված է ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, սակայն գործնականում շեղվել է այդ ուղուց։ Վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու գործընթացը շարունակում է մնալ ստվերում։ Մտահոգիչ է, որ լսելով իր հասցեին հնչող քննադատությունները՝ Վճռաբեկ դատարանը ոչ թե փորձում է պայքարել դրանց պատճառների դեմ, այլ հակընդդեմ մեղադրանքներ է հնչեցնում՝ հաշվի չառնելով, որ սա հազարավոր մարդկանց միջինացված և ամփոփված կարծիքն է», - նշել էր փաստաբան Լիպարիտ Միմոնյանը⁹։ Փաստաբանները նաև բոլորի ուշադրությունն էին հրավիրել այն հանգամանքի վրա, ըստ որի օրենքով նախատեսված է, որ վճռաբեկ դատարանը բողոքը վարույթ ընդունելու հարցը քննարկելիս պարտավոր է արձանագրություն կազմել, ինչը չի արվում և օրենքի կոպիտ խախտում է, որից էլ հետևում է որ այդ դատարանի բոլոր որոշումները անօրինական են։

Փաստաբանների գործադուլին անդրադարձել էր ՀՀ դատական դեպարտամենտի միջազգային համագործակցության և հասարակայնության հետ կապերի ծառայության պետ Արսեն Բաբայանը, ով նշել էր՝ «Վճռաբեկ դատարանը պետք է ապահովի օրենքների միատեսակ կիրառությունը և դրանից բխող

⁹ «Փաստաբանները երկօրյա գործադուլ են անում. Նրանք որևէ դրական տեղաշարժ չեն տեսնում», 10.06.2013, - <http://www.ilur.am/news/view/14664.html>։

միասնական դատական պրակտիկան: Բացի այդ, Վճռաբեկ դատարանն իր գործունեությամբ պետք է նպաստի իրավունքի զարգացմանը: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցը լուծելիս պետք է առաջնորդվի վերոնշյալ առաքելության իրականացման նպատակներով և որևէ պարտավորություն չունի վարույթ ընդունելու տարեկան ներկայացվող տարբեր որակի և բովանդակության շուրջ 4.000 վճռաբեկ բողոք: Եվ եթե հայտարարություններով հանդես եկող փաստաբաններին հայտնի լիներ դատական համակարգի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականների պահանջներն այն մասին, որ երրորդ ատյանի դատարան պետք է ներկայացվեն այնպիսի բողոքներ, որոնք արժանի են քննարկման այն հիմքով, որ զարգացնում են իրավունքը և նպաստում են օրենքի միատեսակ կիրառմանը, պապ կարծում ենք, որ փաստաբանների այդ խմբի կողմից նման մերկապարանոց եզրահանգումներ տեղ չէին գտնի»¹⁰:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնին անհանգստացնում է այն հանգամանքը, որ ՀՀ Վճռաբեկ դատարանն այդպես էլ խաղի միատեսակ կանոններ չսահմանեց: Մասնավորապես, բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները չեն պատճառաբանվում, ինչի հետևանքով փաստաբանները և այլ իրավաբանները չեն կարողանում հասկանալ, թե որ ծանրակշիռ փաստարկն է հիմք հանդիսացել բողոքը վարույթ ընդունելու համար, կամ օրենքի միատեսակ կիրառության համար հարցն ինչ խորությամբ է բարձրացվել, կամ ՀՀ Վճռաբեկ դատարանի որ որոշմանն է հակասել ստորադաս դատարանի որոշումը, ինչ փաստական հանգամանքների նույնությամբ կամ նմանությամբ:

ՀՀ Վճռաբեկ դատարանը, բացի սրանից, բողոքները վերադարձնելիս օգտագործում է այնպիսի ձևակերպումներ, որոնք նույնպես անհանգստացնում են փաստաբաններին: Օրինակ`

¹⁰ «Արսեն Բաբայանը` փաստաբանների գործադուլի մասին», 25.05.2013, - <http://iravaban.net/34536.html>:

նշում է, որ բողոք բերողը խախտել է դատավարական կանոնը, քանի որ բավարար չափով չի պատճառաբանել վարույթ ընդունելու հիմքերը: Ստացվում է, որ փաստաբանը, օգտվելով բողոք բերելու իր իրավունքից, արդեն օրենք է խախտում:

Արդարադատության համակարգի գործունեության արդյունավետությունը և որակը

Գործառույթների չկատարում: ՀՀ արդարադատության համակարգին ուղղված քննադատությունը հիմնականում վերաբերում է այն հարցին, թե ինչու դատարանները չեն կատարում իրենց գործառույթները և պարտականությունները: Ըստ իրավապաշտպան Արթուր Սաքունցի՝ պետք է արձանագրենք, որ անկախ չլինելով հանդերձ, դատական համակարգն ինքը չի հանդիսանում այն ինստիտուտը, որով պետք է վերականգնվի մարդու խախտված իրավունքը ՀՀ-ում:

Ինչպես նշվում է լրատվամիջոցներից մեկում, «ՀՀ-ն կարելի է կոչել վիրտուալ պետություն, որտեղ ամեն ինչ վիրտուալ բնույթ է կրում: Կարծես թե ունենք եվրոպականացված օրենքներ, դատարաններ, արդարադատության նախարարություն, գլխավոր դատախազություն, արդար դատավորներ, դատախազներ և քննիչներ, բայց մարդկանց արդարադատության սովը չի հազե՛նում»:

Ոլորտի մասնագետները կարծիքներ են հայտնել, որ ՀՀ-ում արդարադատության համակարգ դեռևս գոյություն չունի: Իրավապաշտպաններից մեկի կարծիքով նշել է, որ յուրաքանչյուր դատավոր վճիռ կայացնում է ոչ թե օրենքի դրույթներից ելնելով, այլ որոշակի հանգամանքներ հաշվի առնելով, ինչի արդյունքում տուժում են քաղաքացիները: Նա ավելացրել է, որ դատական համակարգը կայացած կլինի միայն այն ժամանակ, երբ անկախանա գործող իշխանությունից:

Դատարանների «պահպանողականությունը» և վերջնական արդարադատության բացակայությունը: ՀՀ դատական համակարգի կարևոր խնդիրներից մեկն է ՀՀ դատական ակտերի դժվար փոփոխելիությունը: «Այն հանգամանքը, որ դատական ակտերի 97%-ը մնում է կայուն, վկայում է այն մասին, որ մեր երկրում Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները չեն գործում», - ասել է փաստաբաններից մեկը:

Փաստաբանների գործադուլային նախաձեռնող խմբի տեղեկացմամբ, 2012թ. ընթացքում ավարտված քրեական գործերով կայացված թվով 2099 դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1067-ը, որոնցից բեկանվել է ընդամենը 49-ը, ինչը տոկոսային արտահայտությամբ կազմում է մոտ 4,6%-ը: Այսինքն՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2012թ. ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7%, իսկ բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 95,4%: Այսպիսով, քրեական գործերով և միջոնորոշություններով ընդհանուր կայունությունը կազմում է 98,1%:¹¹

Արմատացած է այն համոզմունքը, որ դատական որոշումները փոփոխելը կոնկրետ որոշում կայացնող դատավորի համար վնասակար է, նույնիսկ աննշան փոփոխությունները մեծ ցավով են կատարվում:

Նույնիսկ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը համապատասխան որոշում է կայացնում, դրա արդյունքները չեն երևում: Ըստ իրավապաշտպան Կարեն Մեժլումյանի՝ եթե մարդիկ Սահմանադրական դատարանի որոշումից հետո չեն հասնում արդյունքի, նշանակում է՝ այդ իրավունքը իրատեսական չէ, չի գործում: Նա եզրակացրել է, որ «Հայաստանում քաղաքացիները սահմանադրական արդարության իրավունքից զրկված են»:

¹¹ «Փաստաբանները հորդորում են Վճռաբեկ դատարանին սվիններով չընդունել իրենց պահանջը», Ռուզան Մինասյան, 10.06.2013, - <http://www.aravot.am/2013/06/10/253157/>

Վերջնական արդարադատության բացակայության մասին է վկայում Եվրոպական դատարանի կողմից արձանագրած ՀՀ դատարանների որոշումներում առկա մարդու իրավունքների խախտումները: Տեսակետ է հնչել, որ երբ Եվրոպական դատարանն է ճանաչում ՀՀ քաղաքացու իրավունքի խախտումը, ապա դա նշանակում է, որ Հայաստանի երեք աստիճանի դատարանները չեն կարողացել պաշտպանել տվյալ քաղաքացուն:

Փաստաբան Տիգրան Հայրապետյանի կարծիքով, եթե չլիներ Եվրոպական դատարանը, ապա ՀՀ-ում սեփականության իրավունքը առհասարակ պաշտպանված չէր լինի, քանի որ հայցերի թիվը դեպի Եվրոպական դատարան սեփականության իրավունքի պաշտպանության մասով շատացել է: Անգամ Եվրոպական դատարանի որոշումներից հետո էլ ՀՀ դատարանները չեն հասկանում, թե ինչ է նշանակում սեփականության իրավունքի պաշտպանություն Կոնվենցիայի սահմաններում:

Ըստ նրա, ցավալին այն է, որ հասարակության մեջ ներպետական դատական համակարգում եղած անարդարության զգաման հնարավոր իրական և իրավական միակ մեխանիզմը համարվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ինչի մասին վկայում է այս ատյանին ուղղվող դիմումների քանակի էական աճը:

«Galatv.am»-ի լրագրողը Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Հայկ Ալումյանին խնդրել է պարզաբանել, թե ինչու է Հայաստանն այդքան հաճախ պարտվում ՄԻԵԴ-ում: Վերջինս ասել է, որ մեր դատական համակարգում տիրող իրավիճակի համեմատ բոլորովին էլ հաճախ չի պարտվում: Ըստ Հայկ Ալումյանի՝ «Այդ վճիռներն ավելի շատ կարող էին լինել, եթե փաստաբանները մի քիչ ավելի լուրջ մոտենաին իրենց վստահորդների իրավունքների պաշտպանությանը ու ավելի հաճախ դիմեին Եվրադատարան: Ցավալին այն է, որ դրանք

շարքային գործեր են: Մեր դատական համակարգում նման խախտումներն ամենօրյա են»:

Նույնիսկ ստորադաս դատարաններում արդարություն չգտնելու դեպքում ՀՀ քաղաքացին զրկված է լինում այն ավելի բարձր դատարանում գտնելուց, որի հետևանքով միակ հույսը մնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Ըստ վերլուծաբան Արգիշտի Կիվիրյանի՝ «ՀՀ-ում անկախությունից ի վեր դատական համակարգն իրենից ներկայացնում է ամենաթողության մեջ թաղված մի կառույց, որն իրականացնում է ոչ թե մարդու իրավունքների պաշտպանություն, այլ հակառակը՝ լրացուցիչ անգամ խախտում է մարդկանց իրավունքները»: Նա որպես իր խոսքերի առեակատչյա՝ ներկայացնում է այն իրողությունը, որ հայաստանյան դատական համակարգից և արդարադատությունից դժգոհ հարյուրավոր քաղաքացիներ դիմում են Եվրոպական դատարան և փորձում են բողոքարկել և բեկանել սեփական երկրում կայացրած ապօրինի վճիռներն ու որոշումները: Վերլուծաբանը համոզված է, որ այդ դիմումների մեծ մասի հիման վրա Եվրոպական դատարանը որոշումներ է կայացնելու ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ինչն էլ ենթադրում է, որ պետության կողմից մինչ այժմ վճարված փոխհատուցման գումարը կարող է տասնապատկվել:

Արգիշտի Կիվիրյանը ՀՀ դատարանների կայացրած նմանատիպ վճիռները բաժանեց երկու խմբի. «Առաջին խումբն այն գործերն են, որ դատավորները կայացրել են իշխանություններից իջած պատվերով, իսկ երկրորդ խումբը, երբ դատավորներն իրենց կոռուպցիոն և ապօրինի որոշումներով սարքել են այս խնդիրը»:

Վերջնական արդարադատության բացակայություն պետք է համարել նաև այն հանագամանքը, որ, ինչպես նշում է փաստաբան Կարեն Մեժումյանը, մինչև հիմա ՄԴ-ն մոտ 150-200 անձանց գործերում բացահայտել է հակասահմանադրական նորմ, բայց դրանցից որևէ մեկը չի վերանայվել Վճռաբեկ դատարանում: «Ինչո՞ւ չեն վերանայվում: Բոլորը սխալ են: Այդպիսի բացարձակ

բան լինում է: Հայաստանում քաղաքացիները սահմանադրական արդարադատության իրավունքից զրկված են»,- ասում է նա՝ լրագրողներին այս մասին պատմելը համարելով խնդիրը բարձրաձայնելու միակ տարբերակը:

Ո՞րն է պատճառը, որ ՄԴ որոշումները մնում են անկատար: «Pastinfo.am»-ի թղթակցի հարցին ի պատասխան Կ.Մեծլույսյանը պատասխանեց. «Դատարաններն ուզում են այդ կերպ ասել՝ տեսեք, մեր դատական ակտերն անշրջելի են, կլինի Եվրոպական դատարանի որոշում, թե Սահմանադրական դատարանի՝ կապ չունի, մեր դատական ակտերը, մեր մոտեցումները անշրջելի են»:

Ծանրաբեռնվածության խնդիրներ: Շատ խնդիրներ, որոնք առկա են դատարանների գործունեության մեջ, այս կամ այն կերպ առնչվում են ՀՀ դատարանների ծանրաբեռնվածությանը:

Փաստաբաններից մեկի համոզմամբ, դատական գործերի ծավալներն այնքան մեծ են, որ բողոքները լսվում են վճռաբեկության կարգով: Այդ փաստաբանը հավաստիացնում է, որ դատական համակարգում ընդունելի են դառնում փորձաքննության այն արդյունքները, որոնք ձեռնառու են մեղադրող կողմին: Այս ամենը ևս կարելի է կապել դատարանների ծանրաբեռնվածության հետ:

Լրատվամիջոցներում արդիական է համարվել Վարչական դատարանի ծանրաբեռնվածության հարցը: 2010 թվականի համեմատությամբ 2011 թվականի ընթացքում Վարչական դատարանի գործերն ավելացել են ավելի քան 43%-ով և սա այն դեպքում, երբ Վարչական դատարանի դատավորների կազմը կրճատվել է 3 դատավորով: Այս մասին հայտարարել է Վարչական դատարանի նախագահ Կարեն Մաթևոսյանը՝ դատավորների հետ հանդիպման ժամանակ:

Նրա խոսքով՝ յուրաքանչյուր դատավորի վարույթում 2011թ. ընթացքում եղել է ավելի քան 1200 վարչական գործ և 7000

վճարման կարգադրություն: Գործերի նման ծավալների արդյունքում, ըստ նրա, դատավորները ստիպված են լինում դատաքննություններ նշանակել հայցադիմումներ ստանալուց ամիսներ անց, քանի որ, թեկուզ ֆիզիկապես, հնարավոր չէ այդ գործերն ավելի շուտ քննել: Կարեն Մաթևոսյանը նշում է, որ նման ծանրաբեռնվածությունը կարող է բացասաբար ազդել դատական ակտերի որակի վրա:

Ծանրաբեռնվածության հետ կապված խնդիրները վերաբերում են ոչ միայն դատարաններին, այլև հանրային պաշտպաններին, որից տուժում է անվճար իրավաբանական ինստիտուտի արդյունավետ իրականացումը:

«2013-ից քաղաքացիական գործերի մեծ հոսք է գրանցվելու: Ես խիստ կասկածում եմ, որ մեկ մարզում կամ տարածաշրջանում մեկուսացված հանրային մեկ պաշտպանը կկարողանա հավասարաչափ օգնություն ցույց տալ և՛ քաղաքացիական, և՛ քրեական գործերով», - «Pastinfo.am»-ի թղթակցի հետ զրույցում նշել է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մասիս Ղազանյանը:

Ըստ Մասիս Ղազանյանի՝ թեև 2013թ. սեպտեմբերից հանրային պաշտպանների թիվն ավելացել է 18-ով (նախկին 36-ի փոխարեն այսօր աշխատում է 54 փաստաբան, ովքեր բաշխված են մարզերի և մայրաքաղաքի միջև), սակայն ավելացված հաստիքների քանակն էլի չի բավարարի պատշաճ ժամկետները պահպանելու և բարձր որակ ապահովելու համար:

«Կապանի փաստաբանը փորձում է անվճար իրավաբանական օգնությամբ ապահովել Մեղրիի տարածաշրջանի բնակիչներին, բայց ամեն հարցով նա չի կարող հասնել Մեղրի, Մեղրիի բնակիչներն էլ ամեն հարցով չեն կարող հասնել Կապան: Տվյալ տարածաշրջանում պետք է գրասենյակ լինի, որը քաղաքացիների ընդունելություն կկազմակերպի», - նշել է Մ. Ղազանյանը:

Նրա խոսքով՝ կադրերի բացակայության պատճառով չեն կարողանում փաստաբան նշանակել մրցությային կարգով. «Կամ պետք է այդ տարածաշրջանը թողնենք առանց պաշտպանի կամ ստիպված հարմարվենք ոչ մրցակցային դաշտով առաջադրված ու նշանակված փաստաբանին, քանի որ որոշ մարզերում ընտրության հնարավորություն չունենք»:

Արդարադատության առաջընթացը: Էլեկտրոնային լրատվամիջոցներում անդրադարձ է կատարվել նաև ընդհանուր առմամբ արդարադատության առաջընթացին կամ հետընթացին: Իրավաբան Տիգրան Աթանեսյանը, ամփոփելով 2012 թվականի արդարադատության համակարգի վիճակը, իրավական ոլորտում արձանագրում է միայն հետընթաց: «Galatv.am»-ի հետ զրույցում նա ասել է, որ արդարադատությամբ այս տարին առանձնանում էր միայն դատական մեկ գործով՝ «Մատաղիսի» գործով: «Գոնե արդարացրին մարդկանց վերջապես: 9 տարի անց պարզեցին, որ մարդիկ մեղավոր չեն, իսկ մնացած գործերում՝ ոչ, հետընթաց էր, բացարձակ չեմ տեսել զարգացման ինչ-որ միտումներ: Շարքային քաղաքացիների գործերում, որոնցով ես զբաղվում եմ, կս շատ քիչ եմ տեսել արդարադատություն, ցավոք սրտի», - նշել է նա:

Արդարադատության ոլորտի առաջընթացի մեկ այլ մասնավոր օրինակ է մատնանշում «Արնի Քընսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն Արա Ղազարյանը: Նա նշում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանը «գրպարտություն» և «վիրավորանք» հասկացությունների վերաբերյալ այս տարի նախադեպային որոշում կայացրեց: Նրա կարծիքով Վճռաբեկ դատարանի այս որոշումն ընդհանուր առմամբ ողջունելի է, սակայն ըստ նրա՝ որոշումը դժվար թե դիմանա ժամանակի քննությանը:

Դատավորների մասնագիտական պատրաստվածությունը: Ըստ լրատվամիջոցների, դատական համակարգում առկա բազմաթիվ խնդիրներ իրականում պայմանավորված են նրանով, որ մի շարք դատավորներ տեղյակ չեն իրենց իրավունքներից, թույլ

մասնագիտական պատրաստվածություն ունեն: Այս խնդիրն առավել արդիական է քննիչների և արդարադատության համակարգում աշխատող այլ մարդկանց համար:

Փաստաբանների պալատի փաստաբան Գայանե Խաչատրյանը հայտարարել է, թե դատավորները լավ չեն տիրապետում ոչ միայն օրենքներին, այլ նաև մաթեմատիկային:

Նրա խոսքով՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿԶ-ի դատապարտյալ Հ. Կարապետյանը ազատագրվման ձևով պատիժը պետք է կրի նախատեսվածից 2 տարի 5 ամիս ավելի, քանի որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ս. Պետրոսյանը սխալ է գումարել մի քանի դատավճիռներով նշանակված ազատագրվման տարիները, իսկ ՀՀ Վճռաբեկ դատարանն էլ, անտեսելով այդ փաստը, վերադարձրել է այդ հիմքով բերված վճռաբեկ բողոքը:

Ինչպես նշել է ՀՀ արդարադատության փոխնախարար Արամ Օրբեյյանը, «որակի պահանջները ժամանակի հետ անընդհատ բարձրանում են: Եթե 1995-1997թթ. բավարար էր մեկ էջանոց վճիռ կայացնել և գրել՝ ես վճռեցի, այսօր դա բավարար չէ: Այսօր այդ վճիռը պետք է հիմնավորված լինի, պետք է նշվեն իրավական այն նորմերը, փաստական հանգամանքները, որոնք հիմք են տվել դատավորին համապատասխան վճիռ կայացնել», - եզրափակեց փոխնախարարը:

Բարեփոխումներն արդարադատության համակարգում

Էլեկտրոնային լրատվամիջոցներում շրջանառվում է այն տեսակետը, որ, թեև 1990թ. համեմատ Հայաստանը դատախիզական ոլորտում արձանագրել է էական առաջընթաց, դա անհրաժեշտ, սակայն ոչ բավարար պայման է երկրում լիարժեք արդարադատություն իրականացնելու, իրականում արդար, արդյունավետ, հանրության պատասխանատու դատական իշխանություն ունենալու համար:

Միջազգային մարմինները, մասնավորապես «Transparency International» միջազգային հակակոռուպցիան կազմակերպությունը, ընդգծելով արդարադատության համակարգում տիրող իրավիճակը, արձանագրում է, որ բարեփոխումները չափազանց դանդաղ են ընթանում:

Բարեփոխումների ընթացքի մասին իրենց կարծիքն են հայտնել նաև պետական պաշտոնատար անձինք: Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը լորդ Ջոն Պրեսկոտի ղեկավարած պատվիրակությանը ներկայացրել է իր պաշտոնավարման ընթացքում քրեակատարողական հիմնարկներում, դատարաններում կատարված մի շարք աշխատանքներ՝ զուգահեռաբար ընդգծելով, որ դրանք, իհարկե, բավարար չեն, քանի որ հարցումների արդյունքներով դատական իշխանությունների նկատմամբ դեռևս 80% անվստահություն կա: «Պատճառները բազմաբնույթ են», - շեշտել է արդարադատության նախարարը՝ թվարկելով դրանցից մի քանիսը՝ օրենսդրությունում դեռևս պահպանվում են կոռուպցիոն ռիսկերը, առկա են կադրային խնդիրներ և այլն:

Բարեփոխումները Վճռաբեկ դատարանում: Բարեփոխումների դանդաղ ընթացք է նկատվում հատկապես Վճռաբեկ դատարանի գործելակերպում, որի՝ բողոքները վարույթ չընդունելու պարագայում փաստաբաններին այլ բան չի մնում, քան բողոքի

գործողությունների մասնակցելը՝ հույս փայփայելով, որ Վճռաբեկ դատարանն ավելի թափանցիկ կաշխատի:

Սակայն, այնուամենայնիվ, որոշակի փոփոխություններ նկատվում են անգամ Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ: Հ. Ալումյանը դրական է համարում այն հանգամանքը, որ ՄԻԵԴ՝ Հայաստանին վերաբերող վճիռներում դատական պրակտիկայի հետ կապված խնդիրներին Վճռաբեկ դատարանն արձագանքում է, կայացնում նախադեպային որոշումներ: Նա միաժամանակ ընդգծել է, որ այդ նույն խնդիրները փաստաբանները բարձրացնում էին Վճռաբեկ դատարանի առջև, սակայն մնում էին անարձագանք և միայն ՄԻԵԴ դիմելուց հետո քայլեր ձեռնարկվեցին առաջացած խնդիրները լուծելու ուղղությամբ:

Հայկ Ալումյանը առանձնացրել է մի շարք խնդիրներ, որոնք արդեն ստացել են իրենց լուծումը: Մասնավորապես, ըստ նրա, «շտկվեց ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին հակասող այն մտայնությունը, թե նախաքննության կամ դատաքննության ընթացքում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեջ մեղադրվող անձանց նկատմամբ չի կարող կիրառվել գրավը որպես խափանման միջոց:

Շտկվեց նաև իրավիճակը, երբ նախաքննության ավարտը հայտարարելուց հետո մինչև դատաքննության նշանակումը անձը կալանքի տակ պահվում էր ավտոմատ՝ առանց կալանքի ժամկետը երկարացնելու:

Վճռաբեկ դատարանը շտկեց նաև իրավիճակը, ըստ որի՝ անձին կալանավորելու համար դատարան դիմած քննիչն ու դատարանը պաշտպանական կողմին հնարավորություն չէին տալիս ծանոթանալ կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող նյութերին՝ պատճառաբանելով, թե դա նախաքննության գաղտնիք է»:

«Եթե ՄԻԵԴ գնացած չլինեք, խնդիրը կմնար, ուղղակի Վճռաբեկը ՄԻԵԴ-ի վճռից մի քիչ շուտ էր խնդիրը լուծել», - նշել է Հայկ Ալումյանը:

Փաստաբանը նշել է նաև, որ որպես Կոնվենցիայի 3-րդ հոդվածի (անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք) խախտում՝ դատարաններում ճաղավանդակների առկայությունը լրիվ վերացված չէ, մարզերում դրանք դեռևս գոյություն ունեն: «Երևանում 4 տարի է, ինչ վանդակները հանել են, և դա որևէ խնդիր չի առաջացրել, սակայն մարզերում դրանք շարունակում են մնալ», - նշեց Հայկ Ալումյանը:

Ըստ փաստաբանի՝ չի շտկվել նաև կալանքի հետ կապված ամենակարևոր խնդիրը՝ դատարանները կալանավորման որոշում կայացնելիս ներկայացնում են ստանդարտ, օրենքից արտագրած փաստարկներ և ոչ թե կոնկրետ պատճառաբանություններ, թե ինչու անձը, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քննությունն իրականացնող մարմնից, ազդեցություն գործել դատավարության մասնակիցների վրա և կամ կատարել նոր հանցանք: Փաստաբանը որպես զավեշտ է գնահատում գործերից մեկով կալանքի անհրաժեշտությունը հիմնավորող այն փաստարկը, թե իր պաշտպանյալներն ու գործով վկաները բնակվում են նույն վարչական շրջանում:

«ՄԻԵԴ-ը խախտում է արձանագրել այս հարցում, սակայն այն չի վերացվել և վերանալու միտում չունի», - ասաց Հայկ Ալումյանը:

Նշված խնդիրները իրենց լուծումը չեն ստացել հենց Վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումների բացակայության պարագայում:

Վճռաբեկ դատարանի «չբարեփոխման» մասին փաստաբանները նշում են մշտապես: Ինչպես «Փաստինֆո»-ի թղթակցի հետ զրույցում նշել է փաստաբան Գևորգ Գյոզալյանը, դեռևս Վճռաբեկ դատարանի մարտավարությունում որևէ

փոփոխություն տեսանելի չէ՝ նկատի ունենալով բողոքների շարունակական վերադարձները՝ նշելով, որ հարցը ոչ թե բողոք վերադարձնելն է, այլ դրանց մասին հիմքերի բացակայությունը՝ համեմատություն անցկացնելով Սահմանադրական դատարանի հետ, որի վարույթ չընդունած գործերի վերաբերյալ երբևէ որևէ մեկը կասկած չի հայտնում:

Գ. Գյոզալյանը հիշեցրել է, որ Վճռաբեկ դատարանի դեմ իրենց ակցիայից հետո փաստաբանների բողոքի ձայնը լսելի է դարձել իշխանության վերին մարմիններում, մասնավորապես՝ նախագահական նստավայրում. իշխանությանը ներկայացվեցին տեղեկանքներ այն գործերի վերաբերյալ, որտեղ Վճռաբեկ դատարանը երկակի ստանդարտներ էր կիրառել:

Օրենսդրական բարեփոխումներ: Բարեփոխումների դանդաղումը կապվում է նաև օրենսդրության ոչ արագ փոփոխությունների հետ, որին անդրադարձել է Արտակ Զեյնալյանը: Նա նշել է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 26 վճիռ է կայացրել Հայաստանի մասնակցությամբ, որոնց կեսի դեպքում արձանագրվել է, որ Հայաստանում խախտվել է արդար դատաքննության իրավունքը: Փորձագետի խոսքով, ՀՀ կառավարությունը կատարում է Եվրոպական դատարանի վճիռների միայն նյութական և բարոյական փոխհատուցման պահանջի մասը, մինչդեռ օրենսդրական դաշտում ևս բարեփոխումների անհրաժեշտություն կա: «Հայաստանի օրենսդրությունը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Երբ պաշտպանում էինք մարդկանց ոտնահարված իրավունքները, մենք 2 անգամ Սահմանադրական դատարանում վիճարկել ենք օրենքի նորմերը, և դատարանը դրանք ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչել»:

Բարեփոխումները դատական համակարգում: Արդարադատության բարեփոխումների էական մասն են կազմում դատական բարեփոխումները: Դրանք, ինչպես իրավացիորեն

մատնանշում են էլեկտրոնային լրատվամիջոցները, վերջին տարիներին պարբերական բնույթ են կրում:

Ընթացող բարեփոխումների նկատմամբ առկա է գերազանցապես թերահավատ վերաբերմունք հատկապես քաղաքականապես ակտիվ անձանց շրջանում:

Քաղաքական ակտիվիստները, որոնք քաղաքական դատերի արդյունքում նախկինում հայտնվել էին բանտերում, ընդհանրապես հեզնանքով են վերաբերում որևէ փոփոխության՝ ամեն ինչ կապելով քաղաքական կամքի և իշխանությունից դատարանների լիակատար կախվածության հետ:

Էլեկտրոնային լրատվամիջոցները նշում են, որ քաղաքացին այդպես էլ որևէ տեղաշարժ չի տեսնում, այլ միայն հորդորներ է լսում: Ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ հեզնական մոտեցման դրսևորում է էլեկտրոնային լրատվամիջոցների այն տեսակետը, թե բարեփոխումների գործընթացը ունի լավ կողմեր, ապահովվել են շենքային հարմարավետ պայմաններ:

Նշվում է, որ Վճռաբեկ դատարանն այսօր մնացել է համակարգի «վերջին բաստիոնը». «Իշխանությունը, համակերպվելով ներքին ու արտաքին ճնշմանը և դատական ատյանների հարաբերական ազատությանը, ամուր կառչել է այս «բաստիոնից»՝ թույլ չտալու համար դատական անկախ համակարգի կայացումը և այդտեղ «ջրելով» իրեն ոչ ձեռնտու դատական որոշումները»:

Փաստաբանների մոտ փոփոխությունների հույս էր արթնացրել Հրայր Թովմայանի՝ արդարադատության նախարարի պաշտոնում նշանակումը, սակայն որոշ ժամանակ հետո պարզվեց, որ դատական համակարգի որակը չի փոխվել: Փաստաբանները սկսել էին գիտակցել, որ մեկ մարդու ջանքերը զուր են համակարգի դեմ:

Ե՛վ փաստաբանները, ն՛ հասարակությունը իրենց վերաբերմունքով ցույց են տալիս, որ իշխանության կողմից մշտապես հնչեցվող «Ժամանակ է պետք» արտահայտությունն այլևս վստահություն չի ներշնչում:

Փաստաբանների պալատի ղեկավար Ռուբեն Սահակյանը դիրքորոշում է հայտնել, որ գործադուլը օգուտ չի տա և ոչինչ չի փոխի, քանի որ պետք են առավել կոշտ և կոնկրետ քայլեր: Նա առաջարկել էր կոնկրետ դատական գործերի և դատավորների վրա կենտրոնանալ և նրանց դնել պատասխանատվության առաջ՝ սխալ և սպօրինի որոշումների համար:

Ինչպես նշում են վերլուծաբանները, փաստը, որ փաստաբանների հանրույթն արդեն մտածում է դատարանի հետ այլ լեզվով խոսելու և դատական համակարգի հարցը սկզբունքորեն դնելու մասին, արդեն իսկ էական նշանակություն ունեցող երևույթ է պետության համար:

Նախատեսվող բարեփոխումները: Նախատեսվող բարեփոխումների մի մասը վերաբերում է դատարանների ծանրաբեռնվածության խնդիրներին: Ինչպես նշել է Վճռաբեկ դատարանի նախագահ Արման Մկրտումյանը, հաշվի առնելով Վարչական դատարանի գերծանրաբեռնվածությունը՝ ներկայումս քննարկվում է Վարչական դատարանի դատավորների քանակի ավելացման հնարավորությունները, ինչն անպայման կնպաստի դատարանի արդյունավետ և բնականոն աշխատանքին:

Նախատեսվող բարեփոխումների մի հատված վերաբերում է ՀՀ Վճռաբեկ դատարանի գործունեության փոփոխությանը: ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից երկակի ստանդարտների կիրառման փաստերը համակարգող փաստաբանական հանձնախումբը այդ առումով սպասումներ ունի: Այդ հանձնախմբի անդամ Գևորգ Գյոզալյանը միաժամանակ նշել է, որ խնդիրը ոչ թե օրենքների, այլ դրանք կիրառելու մեջ է, խնդիրն անձերն ու երկակի ստանդարտներն են՝ ավելացնելով, որ Վճռաբեկ

դատարանին «պետք է մի ուժ, որը պարտադրի, որ փոխվեն՝ դա նախագահն է»: Իսկ նախագահական նստավայրից եկող ազդակներն, ըստ փաստաբանի, հուսադրող են: Փաստաբանը լավատես է և կարծում է , որ «սա այն դեպքերից չէ, երբ խոսքից գործի չեն անցնում»:

Նախատեսվող բարեփոխումների առանցքն է կազմում Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման ծրագիրը: Նախագիծը մշակող խմբի ղեկավար Հրայր Ղուկասյանը պնդում է, որ այս նախագծով վերջապես Հայաստանը կկարողանա արդարադատություն իրականացնել, քանի որ կուժեղանա դատական իշխանության և դատարանի դերը: Ըստ նրա՝ կտարանջատվեն քննիչի, քննչական բաժնի պետի և դատախազի լիազորությունները:

Բարեփոխումների կարևոր մասն է անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու չափանիշների հստակեցումը, որը վերջին տարիներին շատ արդիական խնդիր է դարձել: Այդ մասին նշել է ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադյանը, որի կարծիքով անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու չափանիշների հստակեցման դեպքում կնվազեն այդ օգնությունը տրամադրող մարմինների կողմից հայեցողական, որոշակի կամայական դրսևորումները: Այդպիսով՝ պետք է Հանրային պաշտպանի գրասենյակը դառնա առավել հասանելի համապատասխան սոցիալական խմբերի համար:

Մարդու իրավունքների պաշտպանը առաջարկում է ընդլայնել Արդարադատության խորհուրդը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներով, որը դատական համակարգի վերահսկողության բարձրացման միջոց է: Սակայն պաշտպանն ընդունել է, որ սա երկարատև գործընթաց է և կապված է Սահմանադրության փոփոխության հետ:

Փորձագետ Հրայր Ղուկասյանը կարևորել է ռազմավարական դատավարությունների փորձը, երբ առանձնակի կարևորություն

ներկայացնող դատական գործը քաղաքացիական հասարակության կողմից վերցվում է ինքնատիպ վերահսկողության տակ, որի վերջնական նպատակն է՝ «ստանալ այնպիսի դատական ակտ, որը կհանդիսանա նախադեպ սկզբունքային փոփոխություն անելու համար օրենսդրության կամ գործող պրակտիկայի այս կամ այն ոլորտում»:

Պատախազության գործունեության հիմնախնդիրները Էլեկտրոնային մամուլի հրապարակումներում

Էլեկտրոնային լրատվամիջոցներում նկատվում է սեփական նախաձեռնությամբ դատախազական համակարգի խնդիրների վերհանման պասիվություն: Լրատվամիջոցները սովորաբար անդրադառնում են հասարակական հնչեղություն ստացած իրադարձություններին և հակված են տվյալ դեպքի առնչությամբ նկատված բացթողումները ներկայացնելու որպես համակարգի ամենասկտուալ խնդիր: Իրենց հերթին, խնդիրների սկտուալությունը գնահատվում է դրանց վերաբերյալ տվյալ ժամանակահատվածում տեղ գտած հանրային արձագանքներով:

Օրինակ, ՀՀ նախագահը խորհրդակցություններից մեկի ժամանակ քննադատություն հնչեցրեց մինչ այդ պահը կատարված աշխատանքների վերաբերյալ՝ նշելով, որ հանրային վստահության բարձրացման ասպարեզում առաջընթաց չի արձանագրվել, որ քրեական արդարադատության բնագավառում շատ հաճախ կարելի է հանդիպել ապօրինի որոշումների և այդ բոլոր թերացումները և խախտումները ուղղակի վարկաբեկում են քրեական արդարադատության բուն էությունը¹²: Նախագահի հատուկ անդրադարձից հետո միայն լրատվամիջոցները սկսեցին առավել ֆոկուսացված ուշադրություն դարձնել խնդիրներին և վերլուծական հոդվածներ հրապարակել:

Հատուկ ուշադրության են արժանանում հանրապետության նախագահի անցկացրած դատախարավական խորհրդակցությունների ժամանակ հնչող այն տեսակետները, որոնք քննադատական բնույթ ունեն: Մասնավորապես, նախագահի անցկացրած հերթական խորհրդակցություններից մեկի ժամանակ

¹² Տե՛ս <http://www.azatutyun.am/archive/news/20111222/2031/2031.html?id=24430479>

պատժի անխուսափելիության հարցն է ուշադրության կենտրոնում եղել¹³:

Հետաքրքիր է, որ համակարգային հիմնախնդիրների առավել հիմնավոր և համոզիչ վերլուծություն են ներկայացնում համակարգի նախկին աշխատակիցները: Այսպես, վերլուծություն է կատարել նախկին դատախազ, այժմ փաստաբանական գրասենյակի ղեկավար Հակոբ Բաբայանը: Ըստ նրա՝ «ներկայումս կան օրենսդրական մի քանի, առնվազն երկու խոչընդոտներ, որոնք չեն նպաստում նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական պատշաճ հսկողության իրականացմանը: Առաջինը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 25 հոդվածի 3-րդ կետն է, որը սահմանում է, որ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը պատասխանատու է նախաքննության «լրիվության, օբյեկտիվության, բազմակողմանիության և արդյունավետության համար»¹⁴:

Նա պնդում է, որ դատախազական անաչառ հսկողություն իրականացնելու համար դատախազությունը պետք է կաշկանդված չլինի նախաքննության արդյունքներով: Բացի այդ, ըստ նրա, «դատախազությունը, նախաքննության մարմնի հետ միասին պատասխանատու լինելով դրա արդյունավետության համար՝ նրա հետ միասին պատասխան է տալիս նաև հանցագործության դեպքերի բացահայտման և նախաքննության ընթացքում թույլ տրված սխալների ու բացթողումների համար: Այդ դեպքում դատախազությունը «շահագրգռված» է դառնում ոչ թե այդ սխալներն ու բացթողումները բացահայտելու, այլ դրանք կոծկելու, հանցագործության դեպքը բացահայտված ցույց տալու և գործը դատարանով ամեն կերպ «անց կացնելու» հարցում»¹⁵: Հակոբ Բաբայանը դատախազության բնագավառում վերադաս-

¹³ Տե՛ս <http://www.aysor.am/am/news/2011/08/25/meeting/?sw>,
<http://www.mediamax.am/am/news/politics/2139/>,
<http://www.yerkir.am/am/news/11274.html>

¹⁴ <http://www.aravot.am/2012/11/08/128299/>

¹⁵ <http://www.aravot.am/2012/11/08/128299/>

ստորադաս հարաբերությունների բաց է համարել այն հանգամանքը, որ վերադաս դատախազը կարող է ցուցումներ տալ ստորադաս դատախազին¹⁶:

Սա եզակի վերլուծություններից է, երբ հանդես է գալիս համակարգը և խնդիրները ներսից ճանաչող մասնագետը: Մնացած դեպքերում լրատվամիջոցները հակված են մեջբերել մասնագիտական առումով խոցելի, սակայն սուր քննադատություն և քաղաքական գնահատականներ պարունակող ելույթները:

Դատախազության գործունեության քաղաքական ենթատեսքտը

Էլեկտրոնային լրատվամիջոցներում ժամանակ առ ժամանակ լուրեր են հայտնվում հանրապետության նախագահի ցուցումներով կամ նախագահի մոտ կայացած խորհրդակցությունից հետո դատախազության կողմից իրականացրած քայլերի վերաբերյալ: Մասնավորապես, դրանց շարքին կարելի է դասել դատախազներին պաշտոնից ազատելու կամ նրանց նկատմամբ տույժեր կիրառելու գործողությունները: Կա տեսակետ, որ վերջիններս պաշտոնից հեռացվում կամ պատժվում են միայն նախագահի հնչեցրած քննադատությունից հետո¹⁷, ինչը նշանակում է, որ դատախազությունն ինքնուրույն չի բարեփոխվում և անգամ անհրաժեշտ ներհամակարգային փոփոխությունները թելադրված են քաղաքական իշխանության կողմից:

Դատախազությունը որոշ դեպքերում դիտարկվում է որպես իշխանությունների պատվերով ընդդիմախոսների նկատմամբ քաղաքական հետապնդումներ իրականացնող մարմին: Հատկապես կարևոր քաղաքական իրադարձությունների ժամանակ, ըստ լրատվամիջոցների, դատախազությունը որպես լծակ օգտագործվում է իշխանության կողմից:

¹⁶ Տե՛ս <http://www.aravot.am/2012/11/08/128299/>

¹⁷ Տե՛ս <http://www.azatutyun.am/content/article/24757599.html>

ԱԺ նիստերի դահլիճում քննարկումների ժամանակ բազմաթիվ կարծիքներ հնչեցին, որոնք կասկածի տակ էին դնում դատախազության անաչառությունը: Դատախազության գործողությունների դրդապատճառն այս հարցում նկարագրել է ՀՅԴ խմբակցության քարտուղար Աղվան Վարդանյանը. «Եթե Վարդան Օսկանյանը չմտներ քաղաքականություն, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը չէր մտնի Խորհրդարան»¹⁸:

Մեկ այլ օրինակ է ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի ելույթը գործը: Վերջինս մեղադրվում էր այնպիսի արարքի կատարման մեջ, որը, հասարակության ընկալմամբ, լայն տարածում ունի, և Զարուհի Փոստանջյանի ընդդիմադիր վարքն էր պատճառ հանդիսացել ելույթը նկատմամբ քրեական գործի հարուցման համար¹⁹:

Հանրային հնչեղություն է առաջացնում նաև «քաղաքական դատավարությունների» ժամանակ տարբեր դատախազների մատուցած «կասկածելի ծառայությունների» դիմաց նրանց պարգևատրումը: Այդպիսի հնչեղություն առաջացրեց ՀՀ վարչապետի կողմից «7-ի գործով» դատախազին պարգևատրելը²⁰:

Քաղաքական պատվերի դրսևորում է դիտարկվում Դատախազության «չեզոքությունը» ընտրությունների գործընթացում տեղ գտնող իրավախախտումների նկատմամբ: Ըստ այդմ, Դատախազությունն անհրաժեշտ միջամտություն չի գործադրում և քրեական գործեր չի հարուցում անգամ այն դեպքերում, երբ հանցակազմի առկայությունն ակնհայտ է հանրության համար:

¹⁸ <http://www.tert.am/am/news/2012/10/05/aghvan-vardanyan/>.

¹⁹ Տե՛ս <http://www.aysor.am/am/news/2011/03/18/aghvan-hovsepyan/>,
<http://www.azatutyun.am/archive/news/20110222/2031/2031.html?id=2316868>,
<http://www.epress.am/2011/02/23/աժ-պատգամավոր-զարուհի-փոստանջյանի-եղ.html>

²⁰ Տե՛ս <http://www.tert.am/am/news/2012/07/03/varchapet/>,
<http://www.newsinfo.am/Վարչապետը-պարգևատրել-է-«7-ի-գործով»-դատախազին-764004/>

Ընտրությունների ժամանակ նկատվող թերացումների մասին խոսել է նաև մարդու իրավունքների պաշտպանը: Վերջինս նշել է ընտրական գործընթացների նկատմամբ դատախազության ձևապաշտական մոտեցումների մասին²¹:

Լրատվամիջոցների կարծիքով դատախազությունը միջամտում է քաղաքական գործընթացներին: Որպես նման միջամտության օրինակը ներկայացվում է 2012թ. ԱԺ ընտրություններին մեծամասնական ընտրակարգով գլխավոր դատախազի եղբոր առաջադրումը: Տեղեկություններ են հայտնվել նաև գլխավոր դատախազի կողմից ընտրություններին մասնակցող իր մերձավոր անձանց աջակցելու մասին²²: Ըստ լրագրողական գնահատականների, գլխավոր դատախազը ձգտում էր վստահելի անձանց իր թիմն ունենալ նոր ձևավորվող ԱԺ-ում:

Մի շարք հրապարակումներում նշվում է ընտրությունների գործընթացին դատախազների միջամտության վերաբերյալ, ինչն արտահայտվում է, օրինակ, որևէ թեկնածուի օգտին «ձայներ երբեք չեմ տալ» միջոցով²³:

Հատկապես ընտրական գործընթացի ժամանակ դատախազության ընտրողական մոտեցման և իներտության մասին լրատվամիջոցները բազմաթիվ հրապարակումներ են կատարում: Եթե նույնիսկ դեպքերի նկարագրությունը չափազանցված է կամ ակնհայտ ապատեղեկատվություն է պարունակում, միննույն է, դատախազության պարզաբանումներն անհրաժեշտ են՝ հանրային կարծիքի ձևավորման տեսանկյունից:

Էլեկտրոնային լրատվամիջոցներում հայտնված նյութերի կապակցությամբ հասարակության ակտիվ հատվածն այդպես էլ համոզիչ պատասխան չի ստանում, թե դատախազությունն ինչու

²¹ Տե՛ս http://henaran.am/news_view.php?post_id=14306

²² Տե՛ս <http://www.7or.am/am/news/view/32740/>,
<http://www.aravot.am/2012/03/21/50932/>

²³ Տե՛ս <http://www.tert.am/am/news/2012/04/11/dataxaz/?sw>

հանցագործության հաղորդումից հետո որևէ գործողություն չի ձեռնարկում: Դատախազության այն մոտեցումը, որ իրենք չեն կարող ամեն դեպքի և հայտարարության կապակցությամբ պարզաբանում տալ, ավելի է ամրապնդում տարածված այն կարծիքը, որ դատախազությունն իր գործառույթները ամբողջովին չի իրագործում:

Դատախազության վրա ճնշումների գործադրման հնարավորությունը

Որպես դատախազության նկատմամբ ճնշումների գործադրման ակնառու օրինակ մատնանշվում է Սյունիքի մարզի դատախազի ազատումը, որը լրատվամիջոցների կողմից կապվում էր Սյունիքի մարզպետի հետ կապված անձանց կողմից հանցագործության կատարումը բացահայտելու հետ²⁴: Այս դեպքն այն եզակի օրինակներից է, երբ, ըստ լրատվամիջոցների, դատախազը պատժվում էր իր լիազորությունները պատշաճ կերպով իրագործելու համար: Ըստ մեկնաբանությունների, դատախազը խախտել էր ինչ-որ չգրված կանոններ և դրա համար պատժվում էր քաղաքական իշխանության կողմից:

Դատախազության ամենօրյա գործունեությունը

Դատախազության առօրյա գործունեությանը լրատվամիջոցները թուուցիկ կերպով են անդրադառնում: Ինչպես վերը ցույց տրվեց, լրագրողները լուսաբանում են հիմնականում աղմկահարույց իրադարձությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնված հարցերը:

Լրատվամիջոցները լուսաբանել են Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցը, որը վերաբերում է 2012 թվականի ընթացքում դատախազության և հատուկ քննչական ծառայության

²⁴ Տե՛ս <http://www.tert.am/am/news/2012/08/30/marzpet/>,
<http://www.panorama.am/am/press/2012/08/30/joghovurd/>,
<http://mardik.am/am/huսարակություն/օրենք-և-իրավունք/item/152851>

ուրտում տիրող վիճակին, որտեղ նշվում է, որ չեն ձեռնարկվել բավարար միջոցներ խորհրդարանական ընտրությունների ժամանակ ընտրակաշառք տալու դեպքերի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրման համար: Նշվել է նաև դատախազության ոչ պատշաճ հսկողության մասին, որի հետևանքով «գրանցվել են ՀՀ ոստիկանության ձեռքակալվածների պահման վայրերում գտնվող ձեռքակալված, ինչպես նաև կալանավորված անձանց իրավունքների մի շարք խախտումներ»²⁵:

Մարդու իրավունքների պաշտպանի 2012թ. գեկույցի մեջ նշվում է նաև դրական տեղաշարժերի մասին: Օրինակ՝ ըստ Պաշտպանի՝ հարուցված քրեական գործերն ավելի արդյունավետ են սկսել ուսումնասիրվել: Պաշտպանը նշում էր նաև, որ դատախազության կողմից մի շարք իրավական ակտերի փոփոխությունների նախագծեր են մշակվել²⁶:

Դատախազության գործունեությունը եղել է նաև ՀՀ նախագահի մշտական ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, խորհրդակցություններից մեկի ժամանակ քննարկվել են նախաքննության վիճակին առնչվող խնդիրները: Առանձնացվել է հատկապես դատախազական հսկողության պատշաճ իրացման բացակայության հիմնախնդիրը: Բազմաթիվ բացասական երևույթներ նախագահը բացատրել է առանձին դատախազների անփութությամբ կամ չարամտությամբ²⁷: Հանրապետության նախագահը նշել է առանձին հանցատեսակների դեմ պայքարի դրական արդյունքների մասին (օրինակ՝ փողերի լվացում և թրաֆիքինգ հանցատեսակների դեմ պայքարում)՝ որպես հիմնավորում բերելով միջազգային գնահատականները:

²⁵ <http://asekose.am/news/5/119998-news-armenia.html>

²⁶ Տե՛ս <http://asekose.am/news/5/119998-news-armenia.html>

²⁷ Տե՛ս http://asekose.am/hy_AM/news/1/105582-news-armenia.html

Կոռուպցիան դատախազությունում

Դատախազության նկատմամբ հասարակական վստա-
հույան մակարդակի վրա բացասական ազդեցություն են ունենում
լրատվամիջոցների հրապարակումները դատախազների
կարողության (ունեցվածքի) վերաբերյալ: Հանրային կարծիքը
սովորաբար ունեցվածքի ծագումը պայմանավորում է
դատախազների կողմից պաշտոնական դիրքի չարաշահման և
կոռուպցիոն վարքագծի դրսևորման հանգամանքով:

Լրատվամիջոցները, օրինակ, մշտապես նշում են գլխավոր
դատախազի և նրա որդու ձեռքբերումների և վերջիններիս
պատկանող շինությունների մասին²⁸:

Միանշանակ բացասական ընկալում էր ստացել գլխավոր
դատախազի որդու՝ դատավորների թեկնածուների ցանկում
ընդգրկվելու փաստը, ինչը բացատրվում էր դատախազի կողմից
պաշտոնական դիրքի չարաշահմամբ: Այսպես, «Հայկական
Ժամանակ»-ն իր ««Ոսկե զավակներն» իրենց ձեռքը կվերցնեն
հայկական ֆեմիդայի դեկը» հոդվածում նշում է, որ
«դատավորների թեկնածուների քրեական մասնագիտացման
բաժնում ընդգրկված է ՀՀ գլխավոր դատախազ Ադվան
Հովսեփյանի որդին՝ Նարեկ Հովսեփյանը, որը ներկայումս
աշխատում է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում՝
որպես քննիչ»²⁹:

Հրապարակումներ են եղել նաև տարբեր դատախազների՝
«գծի տերեր» հանդիսանալու մասին³⁰:

²⁸ Տե՛ս <http://www.tert.am/am/news/2013/04/06/dataxaz/>,
<http://www.emedia.am/hy/1369125892>

²⁹ <http://news.am/arm/news/71378.html>

³⁰ Տե՛ս <http://mitk.am/դատախազությունն-ու-նստիկանություն/>

Դատախազության կողմից դատարանների վրա գործադրվող ճնշումը

Լրատվամիջոցներն անդրադառնում են նաև դատարանների վրա դատախազության ունեցած մեծ ազդեցությանը և ճնշումներին: Ըստ «Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի տնօրենների խորհրդի նախագահի՝ «Այսօր դատական համակարգում ներքին անկախության խնդիր կա դատախազությունից: Վերջին տարիների փորձը՝ կալանավորումների մեծ քանակը և արդարացման դատավճիռների սակավությունն ապացուցում է, որ դատախազությունը դոմինանտ դեր ունի քրեական արդարադատության համակարգում: Դատախազների ներկայացրած կալանման միջնորդությունների մեծամասնությունը բավարարվում է դատարանների կողմից, մինչդեռ նրանք ձեռնպահ են մնում արդարադատության դատավճիռներ կայացնելիս, քանի որ երպես հավանաբար ավելի հանգիստ է դատավորների համար»³¹:

Ըստ փաստաբան Հայկ Ալումյանի՝ «Ինչպես նախկինում, այնպես էլ այսօր դատարաններն աշխատում են դատական ակտերը կայացնել դատախազության օգտին՝ այդ դեպքում, անգամ սխալվելու պարագայում, իրենք խնդիր չեն ունենա: Մինչդեռ հանկարծ ամբաստանյալի օգտին սխալվելու դեպքում դատավորը կարող է զրկվել ամեն ինչից, ինչպես պատահեց գրավի դիմաց անձին ազատ արձակած դատավոր Սամվել Մնացականյանի դեպքում՝ նրան ազատեցին պաշտոնից»³²:

Փաստաբանը մեկ այլ օրինակ էլ է բերում, որը հաստատում է իր նախորդ միտքը. «Դատախազության օգտին էր նաև դատավոր Լեոնիկ Աթանյանի սխալը՝ նա դատավճռում արձանագրել էր՝ ամբաստանյալի նկատմամբ բռնությունները կիրառվել են ճշմարտությունը պարզելու համար: Դատավորին այս դեպքում

³¹ <http://www.lragir.am/index.php/arm/0/right/view/54343>

³² <http://legalportal.am/cat/viewnews/907>

չպատժեցին, և պաշտպանական կողմի բողոքներն էլ մնացել էին անհետևանք»³³:

Դատախազության գործունեության թափանցիկության խնդիրը

Դատախազության գործունեության հրապարակայնության և թափանցիկության բացակայությունն այս մարմնի նկատմամբ հասարակական ցածր վստահության պատճառներից մեկն է:

Հատկապես այնպիսի կարևոր գործում, ինչպիսին է «Մարտի 1-ի» գործը, դատախազության գործունեությունը էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից ներկայացվում էր որպես չափազանց անորոշ, ոչ թափանցիկ: Մշտապես ընդգծվում էր, որ դատախազությունը ոչ բավարար ջանքեր է գործադրում գործի բոլոր հանգամանքների բացահայտման համար:

Այսպիսի հնչեղություն ունեցող գործերի վարման ընթացքում դատախազության վարքը կարևոր գործոն է հասարակական վերաբերմունքի ձևավորման համար: Այսպես, լրատվամիջոցների և քաղաքական ուժերի կողմից դրական գնահատվեց ՀՀ գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի հանձնարարականով յուրաքանչյուր ամսվա առաջին և վերջին շաբաթվա չորեքշաբթի օրերին ՋԼՄ ներկայացուցիչների հետ «Բաց դռների օրվա» հանդիպում կազմակերպելու նախաձեռնությունը: Այդ հանդիպումները վերաբերելու էին 2008թ.-ի մարտի 1-ի և 2-ի իրադարձություններին և նպատակ ունեին գործի ընթացքի մասին իրազեկել հասարակությանը³⁴:

Սակայն վերոնշյալ գործողությունները շոշափելի ազդեցություն չեն ունենում դատախազության գործունեությունն իրապես հրապարակային համարելու հարցում: Չնայած տեղեկատվության ձեռքբերումն առավել դյուրին է դարձել, սակայն

³³ <http://legalportal.am/cat/viewnews/907>

³⁴ Տե՛ս <http://www.aysor.am/am/news/2011/05/16/genproc-march1/>,
<http://hetq.am/arm/news/1265/>

չեն ստեղծվել այն պայմանները, որ բոլոր ցանկացողները կարողանան ստանալ իրենց հետաքրքրող տեղեկատվությունը:

Բացի այդ, չնայած դատախազության գործունեության մասին հասարակությանը իրազեկելու հարցում առկա դրական տեղաշարժերին, դատախազությունը խիստ անհանդուրժող է մամուլում հրապարակվող քննադատական տեսակետների նկատմամբ:

Օրինակ՝ դատախազությունը խիստ և անհանդուրժող գնահատականներ է հնչեցնում լրատվամիջոցներում տարածվող այն տեղեկատվության վերաբերյալ, որն առնչվում է կոնկրետ քրեական գործերով դատախազների ապօրինի կամ անփույթ գործունեությունը/անգործությանը³⁵:

Դատախազության նկատմամբ հասարակական վստահության աստիճանը

Դատախազության աշխատակիցները հաճախ իրենց գործունեության թերացումները բացատրում են դատախազության նկատմամբ հասարակության անվստահությամբ և համագործակցության մշակույթի բացակայությամբ: Մասնավորապես, մարդու իրավունքների պաշտպանի մոտ զարմանք էր առաջացրել Ադվան Հովսեփյանի այն հայտարարությունը, թե հասարակությունը չօգնեց, որ իրենք բացահայտեն մարտի 1-ի դեպքերը: Ըստ Պաշտպանի՝ «Եթե հասարակությունը որևէ հարցում չի օգնում պետական կառույցին, այդ դեպքում ոչ թե հասարակությունը մտածելու բան ունի, այլ այդ կառույցը»³⁶:

Հասարակական անվստահության պատճառները բազմաթիվ են. Դատախազությունը սովորաբար ընկալվում է միայն որպես պատժիչ մարմին, որի նպատակն է ոչ թե հասնել արդարության,

³⁵ Տե՛ս <http://www.hrparak.am/121451/>.

³⁶ <http://www.aysor.am/am/news/2010/04/22/ombudsman-alik-sargsyan/>.

այլ մարդկանց կալանավորել կամ «փակել»: Այս ընկալումն այնքան տարածված է, որ վարչապետ Տիգրան Սարգսյանը, մասնակցելով ՀՀ դատախազության աշխատողի օրվան և դատախազության 94-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին, նշել է, որ «քաղաքացին չպետք է վախենա դատախազից, հասարակությունն էլ պետք է վստահի դատախազությանը՝ համոզված լինելով, որ դատախազությունը պատշաճ ձևով է իրականացնում իր գործառույթները»³⁷:

Դատախազության նկատմամբ հասարակության վերաբերմունքի մասին իր կարծիքն է հայտնել նախագահ Մերժ Սարգսյանն իր անցկացրած խորհրդակցությունների ժամանակ: Նա նշել է, որ «...այս ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է բարձրացնեն մեր հանրության վստահությունը համակարգի նկատմամբ՝ ավելացնելով, որ արդյունքներն այդ օրվա դրությամբ գոհացուցիչ չեն»³⁸:

Հասարակական վստահության բացակայությունը դրսևորումներ է ունենում առավելապես բողոքի գործողությունների տեսքով, որոնց հատկապես ակտիվ մասնակցություն են ունենում փաստաբանները: Ընդ որում, բողոքի միակ հասցեատերը Դատախազությունը չէ, այլ դատախարավական համակարգն ամբողջությամբ³⁹:

Դատախազությանը հասցեագրված բողոքի գործողությունները գլխավորապես կազմակերպվում են առանձին դեպքերի առնչությամբ՝ մեղադրյալների հարազատների, կողմնակիցների, համակիրների մասնակցությամբ⁴⁰:

³⁷ <http://www.aysor.am/am/news/2012/07/02/tigran-sargsyan/>,

<http://www.aravot.am/2012/07/02/87088/>.

³⁸ Տե՛ս <http://www.azatutyun.am/archive/news/20111222/2031/2031.html?id=24430479>

³⁹ Տե՛ս <http://iravaban.net/2012/06/11/անհրաժեշտության-դեպքում-փաստաբաններ/>, <http://hetq.am/arm/print/15427/>

⁴⁰ Տե՛ս <http://www.epress.am/2013/06/03/Մարդասպանին-100-հազար-դոլարով-անմեղսուն.html>

Ըստ լրատվամիջոցներից մեկի դիտարկման՝ «Առհասարակ դատախազական համակարգը այն թույլ օղակներից է, որտեղ առկա խնդիրները շատ ավելի են, քան մնացած ոլորտներում, իսկ հասարակության վերաբերմունքը այդ համակարգի նկատմամբ խիստ բացասական է»⁴¹:

Հասարակության վերաբերմունքի ձևավորման վրա կարևոր ազդեցություն են ունենում քաղաքական ուժերի գնահատականները: Հատկապես ընդդիմադիր քաղաքական ուժերի համար դատախազությունը ներկայանում է որպես իշխանությունների պատվեր կատարող, քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ գործեր հարուցող մարմին: Այսպես, ՀԱԿ խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանն Ազգային ժողովում հայտարարել է, որ ՀԱԿ-ը չի վստահում գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանին և ամբողջ կազմով չի մասնակցելու Խորհրդարանում Օսկանյանի գործով քվեարկությանը⁴²: Քաղաքական նմանատիպ գնահատականներն իրենց կարևոր ազդեցությունն են ունենում հասարակական կարծիքի (անվստահության) ձևավորման վրա:

Հսկողությունը դատախազության գործունեության նկատմամբ

Էլեկտրոնային լրատվամիջոցներում տարածված է այն տեսակետը, որ դատախազներն իրենց գործունեությունը ծավալելիս չեն հսկվում որևէ այլ մարմնի կողմից, իրենց գործունեության մեջ ազատ են, և դատախազների գործունեության կոնկրետ չափանիշեր գոյություն չունեն: Նաև այս մոտեցման հիման վրա է, որ առանձին դատախազների ապօրինի կամ անփույթ գործունեության հիմնական պատճառ է համարվում գլխավոր դատախազության անգործությունը (կամ՝ թույլ հսկողությունը):

⁴¹ <http://asekose.am/news/11/105617-news-armenia.html>

⁴² http://asekose.am/hy_AM/news/1/103722-news-armenia.html

Լրատվամիջոցները դրական են գնահատել այն հանգամանքը, որ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը խիստ հանձնարարական էր տվել, ըստ որի՝ բոլոր դատախազներն այդուհետ պետք է հաշվետվություն ներկայացնեն, թե կիսամյակի ընթացքում քանի քաղաքացու իրավունքներ ու շահեր են վերականգնել⁴³:

Մարդու իրավունքների ոտնահարումները դատախազությունում և առանձին դատախազների կողմից

Լրատվամիջոցները դատախազների կողմից բռնությունների գործադրման⁴⁴, տարբեր բռնի միջադեպերին դատախազների մասնակցության⁴⁵, դատախազներին ոչ հարիր վարքագծի դրսևորման վերաբերյալ տարբեր դեպքեր են հիշատակում: Դրանք երբեմն այնպիսի հնչեղություն են ստացել, որ մի շարք դատախազներ հեռացվել են աշխատանքից⁴⁶:

Ընդ որում, նմանատիպ դեպքերը հաճախ տեղ են գտնում նախաքննություն փուլում և նույնիսկ պետական այլ մարմինների աշխատակիցների հետ հարաբերություններում⁴⁷: Մեկ այլ դեպքում դատախազը ծեծի էր ենթարկել ճանապարհային ոստիկանության աշխատակցին, որի պատճառով հեռացվել էր աշխատանքից⁴⁸:

⁴³ <http://www.aysor.am/am/news/2010/02/24/agvan-hovsepyan/>

⁴⁴ Տե՛ս <http://www.aysor.am/am/news/2011/10/07/general-prosecutor/>,
<http://www.azatutyun.am/content/article/24757599.html>

⁴⁵ Տե՛ս <http://www.aravot.am/2012/12/13/140260/>

⁴⁶ <http://www.azatutyun.am/archive/news/20120217/2031/2031.html?id=24487525>,
<http://www.azatutyun.am/content/article/24757599.html>

⁴⁷ Տե՛ս

<http://www.tert.am/am/news/2012/12/13/dataxaz2/www.youtube.com/user/tertarmenia>,
http://henaran.am/news_view.php?post_id=14556

⁴⁸ Տե՛ս <http://news.am/arm/news/126713.html>

Դատախազության գործունեության մեջ տեղ գտած չարաշահումները

Լրատվամիջոցներում տարածված են գնահատականներն այն մասին, որ Դատախազությունը պարբերաբար դուրս է գալիս իր լրագորությունների շրջանակներից, գործում է առանց որևէ չափանիշի և թողտվության պայմաններում:

Դատախազության համակարգում տիրող վիճակը բնութագրել է 7or.am լրատվամիջոցը՝ ներկայացնելով դատաիրավական համակարգի աշխատակիցների շրջանում տարածված անեկդոտը: Ըստ այդմ, ՀՀ գլխավոր դատախազն իր ենթականերին խորհուրդ է տվել՝ «Եթե չգիտեք՝ ինչպես առաջնորդվել, ապա առաջնորդվեք օրենքով»⁴⁹: Անկախ այս պատմության անեկդոտային բնույթից և իրական/ոչ իրական լինելու հանգամանքից, կարելի է ասել, որ այն արտացոլում է դատախազության գործունեության վերաբերյալ հենց իրենց՝ դատախազության աշխատակիցների մի մասի պատկերացումները:

Փաստարանների կարծիքով, դատախազության գործունեության մեջ որևէ հստակ չափանիշ առկա չէ: Դատախազներն իրենք են որոշում, թե ում դեմ գործ հարուցեն կամ չհարուցեն, որ գործը կարճեն կամ չկարճեն: Լրատվամիջոցներն անդրադարձել են, օրինակ, Լոռու դատախազի կողմից անմեղության կանխավարկածի խախտմանը, որի կապակցությամբ հայտարարությամբ էր հանդես եկել Դատավորների միության խորհուրդը: Մասնավորապես, դատախազն անմեղության կանխավարկածի սահմանադրական երաշխիքից օգտվող անձին անվանել էր «մարդասպան»: Բացի այդ, նա դատարանին խորհուրդ էր տվել առաջնորդվել հասարակական կարծիքով՝ այն դեպքում, երբ դատարանը պարտավոր է առաջնորդվել միայն Սահմանադրությամբ և օրենքներով և ոչ թե հասարակական

⁴⁹ <http://www.7or.am/am/news/view/40988/>

կարծիքով⁵⁰: Լոռու մարզի դատախազի այս և այլ գործողությունների վերաբերյալ իրենց բողոքն էին արտահայտել մարզի 2 տասնյակ փաստաբաններ⁵¹:

Բարեփոխումներ դատախազությունում

2013թ. անելիքների մասին խոսելիս ՀՀ գլխավոր դատախազը նշել էր, որ «2013թ.-ին դատախազությունն անելու է հնարավորը՝ եապես բարեփոխելու և բարելավելու թե՛ դատախազական համակարգի, թե՛ ողջ իրավական համակարգի աշխատանքային գործունեությունը»⁵²: Նա միաժամանակ նշել է, որ «պետք է ամեն ինչ արվի, որպեսզի հնարավոր լինի բացառել հանցագործությունների քողարկման դեպքերը, որը լուրջ մտահոգության առարկա է նաև ոստիկանության ղեկավարության համար»⁵³: Միևնույն ժամանակ, գլխավոր դատախազն ակնարկել է, որ շատ թերություններ գուտ դատախազության գործունեության հետևանք չեն, այլև մյուս պետական մարմինների գործողություններից/անգործությունից են բխում: Դատախազության աշխատակիցներն իրենք էլ մշտապես նշում են այն մասին, որ կատարված բարեփոխումները դեռևս բավարար չեն:

Բարեփոխումների համատեքստում կարևոր քայլ էր Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը: Ըստ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը մշակող խմբի ղեկավարի՝ «Այս նախագծով վերջապես Հայաստանը կկարողանա արդարադատություն իրականացնել: Ու այսպես կուժեղանա դատական իշխանության և դատարանի դերը: Տարանջատվում են քննիչի, քննչական բաժնի պետի և դատախազի լիազորությունները, ու նրանցից յուրաքանչյուրը պատասխանատու է դառնում գործի որակի համար: Մինչև այս քննիչին

⁵⁰ <http://www.tert.am/am/news/2011/04/04/judge/>

⁵¹ Տե՛ս <http://www.tert.am/am/news/2011/03/26/statement/>

⁵² <http://www.tert.am/am/news/2013/02/12/aghvan-hovsepyan/>

⁵³ <http://www.tert.am/am/news/2013/02/12/aghvan-hovsepyan/>

կարող էր ուղղորդել դատախազը, այսուհետև դատախազը կարող է միայն պոստ ֆակտում անդրադառնալ քննիչի աշխատանքին»⁵⁴:

Ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ իրենց հեղինակային կարծիքն են հայտնել նաև լրատվամիջոցների ներկայացուցիչները: Այսպես, դրանցից մեկի համաձայն՝ «Դատախազության ոլորտում ցանկացած ողջամիտ բարեփոխում ողջունելի է, սակայն մեկ-երկու լուծումներն ի վիճակի չեն լինի լուծել այդ համակարգի հիմնական խնդիրները, այդ ոլորտում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ ու նոր լուծումներ»⁵⁵:

⁵⁴ <http://www.armnewstv.am/hy1361566104/1351778120>

⁵⁵ <http://asekose.am/news/11/105617-news-armenia.html>

Եզրահանգումներ

Էլեկտրոնային լրատվամիջոցների՝ ՀՀ դատաիրավական համակարգին առնչվող հրապարակումների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել և ընդհանրացնել այն հիմնախնդիրները, որոնք կարևոր են այս ոլորտում բարեփոխումների պլանավորման կամ վերանայման համար:

Հիմնախնդիրների համառոտ նկարագիրը հետևյալն է.

1. Արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վստահության ցածր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց թվում առաջնահերթ կարելի է նշել համակարգի գործունեության արդյունքում արդարության և անկողմնակալության արժեքների ոտնահարումը: Այս ընկալման հիմքում ընկած է կասկածը դատական իշխանության կոռումպացվածության և գործադիր իշխանությունից կախվածության, ՀՀ դատարանների (և հատկապես Վճռաբեկ դատարանի) ոչ թափանցիկ և ոչ կանխատեսելի գործունեության վերաբերյալ:

Հասարակական նվազ վստահության վրա իրենց ազդեցությունն են ունենում նաև այսպես կոչված քաղաքական դատավարությունները և քաղաքական դրդապատճառներով մարդկանց պատժելու պրակտիկան, ապօրինի և անօրինական գործողություններ իրականացրած պաշտոնյաների առաջխաղացումն ու խրախուսումը: Հասարակական կարծիքի ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունեն նաև Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականները և Եվրոպական դատարանի՝ Հայաստանին առնչվող վճիռները:

Հասարակական ցածր վստահության հետևանքներից մեկն է ՀՀ-ում վերջնական արդարադատության բացակայության վերաբերյալ տեսակետի ամրապնդումն ու դրա հետևանքով Եվրոպական դատարանին ուղղված դիմումների ավելացումը:

2. Լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում գտնված հիմնարար հարցերից մեկն է դատարանների անկախության խնդիրը: Անկախության բացակայությունը հիմնականում դրսևորվում է իշխանության կողմից գործադրվող ճնշումներին ենթարկվելու, իշխանության մարմինների հետ դատական որոշումներն ու վճիռները համաձայնեցնելու, պետական մարմինների և ազդեցիկ անձանց/խմբերի «դեմ» որոշումներ չկայացնելու կաշկանդվածությամբ: Ընդ որում, ակտուալ է նաև դատական համակարգի ներքին անկախության բացակայության խնդիրը՝ Վճռաբեկ դատարանի՝ ստորադաս դատարաններին իր խիստ վերահսկողության ներքո պահելու գործելակերպը:

Ըստ լրատվամիջոցների, դատական մարմիններն ու դատավորները բավականին անպաշտպան են՝ ճնշումներին դիմակայելու համար: Դատարանները կախվածություն ունեն ոչ միայն պետական մարմիններից և գործադիր իշխանությունից, այլև՝ դատախազությունից (դատախազի դիրքորոշումն ուղղորդող նշանակություն ունի դատավորի համար), ազդեցիկ պաշտոնատար անձանցից և անհատներից:

3. Անկախության բացակայության պատճառով դատարանը չի կարողանում վերականգնել մարդկանց ոտնահարված իրավունքները, ավելին, ինքն է խախտում դրանք:

4. Մյուս կարևոր խնդիրն է ընտրողական արդարադատությունը և օրենքի խտրական կիրառությունը: Հանրության շրջանում այն համոզմունքն է տարածված, որ դատարանները, կախված կոնկրետ գործից և անձից, խտրական մոտեցում են ցուցաբերում:

5. Խափանման միջոցների ընտրության հարցում բացակայում են հստակ չափանիշները: Դատարաններն, առանց քրեական գործով ձեռք բերված որևէ հիմքի, անձանց նկատմամբ կալանքն ընտրում են որպես խափանման միջոց:

6. Վերջին տարիներին արդիական է դարձել Եվրոպական դատարանի վճիռների՝ ՀՀ դատարանների կողմից հաշվի չառնելու պրակտիկան (սխալ գործած դատավորի համար Եվրոպական դատարանի վճիռները որևէ հետևանք չեն առաջացնում), բացի այդ՝ միջազգային նորմերի՝ ներպետական օրենսդրության հետ հակասությունների պարագայում գերակայությունը տրվում է ներպետական օրենսդրությանը:

7. Լրատվամիջոցներում հանդիպում են տեղեկություններ, որոնք վերաբերում են դատաիրավական համակարգում կատարվող կոպիտ խախտումներին, օրինակ՝ դատավորի կողմից բռնության գործադրման, դատավորների կողմից ակնհայտ ապօրինի որոշումների կայացման (որոնցով խախտվել են անգամ օրենքով նախատեսված ձևական պահանջները), դատական նիստերի անհիմն հետաձգումների՝ ամբաստանյալի՝ կալանավորված լինելու պարագայում:

8. Դատարանների գործունեության թափանցիկության և հրապարակայնության բացակայության համատեքստում ավելի շատ անդրադարձ է եղել Վճռաբեկ դատարանի գործունեությանը, որը, փաստաբանների գնահատականներով, գործում է փակ և մեկուսի պայմաններում: Փաստաբանների համար հատկապես վրդովեցուցիչ է Վճռաբեկ դատարանի գործելակերպը, երբ առանց որևէ հիմնավորման վճռաբեկ բողոքները վերադարձվում են:

9. Դատաիրավական համակարգում տիրող կոռուպցիայի առնչությամբ լրատվամիջոցները նշում են հիմնականում դատավորների կաշառվածությանը: Կոռուպցիոն դրսևորումներից է նաև նախաքննության ընթացքի նկատմամբ ապօրինի ազդեցությունը: Կոռուպցիայի մասին հնչած միջազգային գնահատականներն ամբողջացնում են կոռուպցիայի ծավալի վերաբերյալ տեսակետները:

10. Մատնանշված մյուս խնդիրներն են՝ դատավարության կողմերի միջև իրական մրցակցության բացակայությունը,

դատավորների մասնագիտական պատրաստվածությունը, դատարանների (հատկապես Վարչական դատարանի) և հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը, մեղադրական բնույթի դատավճիռների մեծ թիվն ու արդարացման դատավճիռների ցածր մակարդակը:

11. Բարեփոխումների ընթացքի վերաբերյալ լրատվամիջոցների անդրադարձերը հիմնականում բացասական են, դրանց նկատմամբ մասնագետների և հասարակական վստահությունը ևս ցածր մակարդակի վրա է: Բարեփոխումների արդյունքներն ու նվաճումները շոշափելի և տեսանելի չեն:

12. Ընդհանուր առմամբ, նախաքննական մարմինների գործունեությունը, դատական մարմինների հետ համեմատության մեջ, առավել ոչ թափանցիկ է, իսկ լրատվամիջոցների ուշադրությունն այս խնդրի նկատմամբ պասիվ:

13. Լրատվամիջոցները դատախազության գործունեությանն անդրադառնալիս բազմաթիվ խնդիրներ են նշել նախաքննության ընթացքում դատախազության կաշկանդվածության, տարբեր հանցագործությունների (հիմնականում՝ ընտրական գործընթացում տեղ գտած կամ ազդեցիկ անձանց կողմից կատարված) հաղորդումների նկատմամբ ոչ համապատասխան վարքագծի վերաբերյալ: Այլ կարևոր խնդիր է դատախազության կողմից դատարանի վրա գործադրվող ճնշումն ու դրա հետևանք հանդիսացող դատարանի կաշկանդվածությունը:

14. Լրատվամիջոցների որոշ հրապարակումներում դատախազությունը դիտարկվում է որպես իշխանությունների հրահանգով ընդդիմախոսների նկատմամբ քաղաքական հետապնդումներ իրականացնող մարմին: Առկա են տեսակետներ այն մասին, որ դատախազության գործունեությունը չի ենթարկվում հստակ չափանիշների և այդ պատճառով պակաս կանխատեսելի է, առկա է կամայական գործողությունների դրսևորման լայն դաշտ:

15. Դատախազության նկատմամբ հասարակական վստահության մակարդակի վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ լրատվամիջոցների հրապարակումները դատախազների կարողության (ունեցվածքի) վերաբերյալ կամ դատախազների՝ առանձին գործերում ունեցած հատուկ շահագրգռության (կոռուպցիոն ռիսկեր) մասին: Առկա են դատախազության գործունեության հրապարակայնության և թափանցիկության բացակայության, ինչպես նաև՝ դատախազների կողմից գործադրված բռնությունների, լիազորությունների շրջանակից դուրս գալու դեպքերի վերաբերյալ հրապարակումներ: